162

ԼՈՒՍԱՐՁԱԿ

ԿԱԶՄԵՑ ՍՏ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



Ա. ՏԱՐԻ

22 NOV. 2017

ԼՈՒՍԱՐՁԱԿ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑ
ՍՏ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ—ՅԵՐԵՎԱՆ,

Հր. № 1002. Գրառեպվար № 2205 (բ). Տիրաժ 32,000։
Գետնրատի առաջին տպարան Վաղարշապատում։
Պատվեր № 118։

ՀԱՍԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
(II-10485ստ)
(III-2223գ)
(III-1237ստ)
II-2655գ/ա



1. Տոն

Մենք այբբենարանն ավարտելուց հետո տոն կազմակերպեցինք։ Դասարանը լավ զարդարեցինք։ Մեր աշխատանքները սեղանների վրա էին, որ յեկողները տեսնեն։

Շատ մարդիկ էին յեկել։

Դուրս յեկավ Զաքարը. զեկուցում տվեց մեր աշխատանքների մասին։

Ասեց, որ 6 եքսկուրսիա յենք ունեցել, հինգ վոտանավոր ենք սովորել։ Թվաբանությունից մինչև 10-ը բոլոր գործողությունները գիտենք։

Հետո մենք կարդացինք և թերթիկների վրա

ամեն մեկս գրեցինք մեր անունը, ազգանունը և տարիքը։



Վերջը խմբով յերկու վոտանավոր ասացինք։

— Դուք ել այդպիսի տոն կազմակերպել եք։
— Պատմեցեք՝ ինչպես անցավ ձեր տոնը։

---

2. Գրագետ

Սուրենը նստած եր սեղանի առաջ. գիրք եր կարդում. Վարդանը մոտենում է ու հարցնում.

— Կարդալ գիտե՞ս։

— Գիտեմ,—պատասխանում է Սուրիկը,—լավ եմ կարդում։ Ավելի լավ կկարդայի, բայց կետերը խանգարում են։

— Ձեզ ել խանգարում են կետերը։

3. Վորոշումները

Ընդհանուր ժողով արինք։
Որապահների համար կանոններ մշակեցինք.

1. Առավոտները բաց անել ողանցքները.
2. Կավիճ պատրաստել, թանաքամանները թանաք լցնել.
3. Դասամիջոցին հետևել, վոր աշակերտները դուրս գան բակը.
4. Ծաղկամանները ջրել.
5. Դասերից հետո դասարանը կարգի բերել։

Դուք դասարանում կազմակերպություն ունեք։

---

4. Ի՞նչ կխնդրեր գիրքը

Ուսուցչուհին այսոր ասաց մեզ.

— Գիտեք, յերեխաներ, ձեր գիրքն ինչ կասեր ձեզ, թե խոսել կարողանար։

Նա կասեր.

— Կեղտոտ ձեռքերով ինձ չվերցնեք։
— Մեջտեղից չծալեք, կազմս կփչանա։
— Թերթերի անկյունները չծալծլեք։
— Վոչինչ չգրեք և չնկարեք իմ մեջ։

Ուսուցչուհու ասածը մեզ շատ դուր յեկավ, և մենք վորոշեցինք գրքի բոլոր խնդիրները կատարել։

— Ի՞նչ կխնդրեր տեսարակը։
— Ի՞նչ կխնդրեր նստարանը, սեղանը։
— Ի՞նչ կխնդրեր դասասենյակը մատիտը, գրչակոթը և այլն։

---

5. Բժշկի զրույցներից

1 զրույց

Բժիշկը մեզ քննեց· շատերի մարմինը կեղտոտ եր։ Բժիշկը մի կլոր ապակի յեր բերել—խոշորացույց. այդ խոշորացույցը դրեց մեր ձեռքերի վրա ու հարցրեց·

— Ի՞նչ եք տեսնում։

— Շատ ծակոտիներ·—պատասխանեցինք մենք։

— Այդ ծակոտիներից քրտինք են դուրս գալիս,— ասաց բժիշկը·—քրտինքի հետ մեր մարմնից փնասակար, կեղտոտ նյութեր են դուրս գալիս։

Յեթե այդ ծակոտիները կեղտոտ լինեն, փնասակար նյութերը կմնան մարմնի մեջ ու կթունավորեն։

Բժշկի այս զրույցից հետո մենք իմացանք, թե ինչու պետք է մարմինը մաքուր պահենք։

2 զրույց

— Ցերեխեք, յես տեսնում եմ, վոր դուք չեք սիրում ուտելուց առաջ ձեռքներդ լվալ,—ասաց բժիշկը·—պետք է լվացվել։ Ձեռքերով մենք հաց ենք վերցնում, դնում բերանը։ Յեթե ձեռքերը կեղտոտ են, մենք կարող ենք վարակվել։

— Դուք հետևում եք ձեր դասարանի աշակերտների մաքրությանը։
— Ուտելուց առաջ լվացվում եք։

---

6. Ի՞նչ է անում մեր սանիտարը

Ամեն շաբաթ մեր դասկոմը նշանակում է մի նոր սանիտար, վոր հսկում է մաքրությանը։

Հետևում է, վոր դասամիջոցներին լուսամուտը կամ ողանցքները բաց անեն, դասարանի փոշին և գրատախտակը թաց ջնջոցով մաքրեն։

Նա մեզ հիշեցնում է, վոր դասարան մտնելիս վոտները մաքրենք և դպրոցում մաքրություն պահպանենք։

Յերբ մեկը ձեռքն է կտրում կամ մի տեղը փնասում, սանիտարն ոգնություն է ցույց տալիս, կապում է կամ յոդ քսում։

Մեր սանյեռյակը պատերին պլակատներ է կախ արել։ Նրանց վրա առողջապահական կանոններ են գրված։

Նախասենյակում պլակատի վրա գրված է՝

ՎՈՏՆԵՐԴ ՄԱՔՐԻ՛Ր։

— Սանիտար ունեք դուք։
— Ի՞նչ է անում նա։
— Դպրոցում մաքրություն պահպանում եք։

---

7. Մրսելու դեմ

Հենց վոր աշնան անձրևները սկսվում էին, մեր դասարանում հազ ու փռշտոց էր ընկնում. հարբուխն սկսվում էր։

Կարմրաթուշ Արմիկն էր միայն, վոր ծիծաղում էր մեզ վրա։ Հարբուխը կամ հազելը չգիտեր ինչ բան է։ Շատ խնդրեցինք, պատճառը մեզ ասաց.

«Ցես պիոներ եմ, մեր հրահանգիչը մեզ մի քանի պատվեր է տվել. յես կատարում եմ և չեմ հիվանդանում։ Ահա այդ պատվերները.

1. Վոտներդ չթրջես, իսկ յեթե թրջվեց, շուտ չորացրու։

2. Քրտնած դուրս չգաս փողոց։ Զգուշացիր միջանցուկ քամուց։

3. Առավոտ ու յերեկո մինչև գոտին մարմինդ սառ ջրով լվա։

Առավոտը, յերբ լվացվում ու շփվում ես սառ ջրով, աշխուժ ու զվարթ ես դառնում։

Հետևեցեք այս պատվերներին։

8. Մեր ճաշը

Հասավ ճաշի ժամանակը։

Մայրիկս կավե ահագին ամանը լցրեց թանապուրով ու մեջտեղ դրեց։ Բոլորս շարվեցինք ամանի շուրջը, գդալները վերցրինք ու սկսեցինք ուտել։

Արտաշը գդալը ձեռքին՝ մտիկ էր տալիս ուտողներին, ամանն ու գդալները գննելով։

Նա տեսնում էր, թե ինչպես պապիկի ու հայրիկի բեղերը թրջվում էին ապուրով. ապուրը կաթկթում էր ամանի մեջ։

Գդալներն ել լավ չէին ժաքրել. յերեկվա ապուրը չորացել էր վրանները։

Արտաշի ախորժակը փակվում էր, չեր ուզում ճաշել. նրա վրա միշտ նեղանում էին. անունն ել «կոտրատվող» էին դրել։

— Լավ էր անում Արտաշը, վոր ընդհանուր ամանից չեր ուտում։

— Առողջապահական է ընդհանուր ամանը։

— Առանձին ամաններում ուտելն ինչով է լավ։

— Ձեր տանն ինչպես են ճաշում։

— Ձեր ամաններն ու գդալները մաքուր են լինում։

— Ինչու պետք է մաքուր լինեն։

— Կեղտից ամեն տեսակի հիվանդություններ են առաջ գալիս. մաքրություն պահպանեցեք։

9. Առաջին ձյունը

Վայ, մայրիկ ջան, տես,
բակն ու դուռը լի,
ինչքան սպիտակ
թիթեռ է գալի։
Եսքան շատ թիթեռ
չեմ տեսել յես դեռ։
— Չե, իմ անուշիկ,
թիթեռներ չեն եղ։
թիթեռներն անցան
ծաղիկների հետ։
Եղ ձյունն է գալի,
փաթիլն է ձյունի,
վոր կարծես սպիտակ
թիթեռնիկ լինի։

---

10. Ձմեռ

Ձմեռ է։ Սար ու ձոր սպիտակ են հագել։

— Ղա՛, ղա՛, ղա՛ — մի բարձր տեղ կանգնել ու կռավում է ագռավը։



Ամենքը ձայները կտրել են, մտել իրենց տունն ու բունը։

Միայն յերեխաներն են, վոր ամբողջ որը հաց ու ջուր մոռացել, ձնագնդի յեն խաղում և իրիկունը ձեռներին փչելով վերադառնում տուն։

— Նկարեցեք ձմռան տեսարաններ։

---

11. Յեր և լինում

Ձյուն կա դաշտերին,
սառույց գետերին.
բուքն է հեծեծում,
դռները ծեծում։
Այս յերը է լինում։

---

12. Մեր որատետրից

Մենք վորոշեցինք դիտել ձմռան գալը։

Կենդանի անկյան հերթապահները պետք է դիտեն ու գրեն, թե՝

1. Յերբ է առաջին ձյունը յեկել։
2. Յերբ է սառել գետը։
3. Ի՞նչ թռչուններ են մնում ձմռանը մեզ մոտ։

---

13. Ձյունը

Մենք վերցրինք ձյունով լիք բաժակը և դասարան բերինք։ Ձյունն սկսեց դանդաղ հալչել։ Յերբ բոլորովին հալվել եր, մենք տեսանք, վոր բաժակը լիքը չեր, և ձյունից գոյացած ջուրը պղտոր եր։

Ջուրը բաժակով մի քանի որ մնաց դասարանում, և մենք տեսնում եյինք՝ ինչպես նա ամեն որ պակասում եր։ Ուսուցիչը մեզ ասաց, վոր ջուրը գոլորշիանում է և ցնդում ոդի մեջ։

---

14. Վերմակը

Ձյունի բյուրեղներն ընկնում են գետին։ Ծածկում են գետինը սպիտակ, փափուկ վերմակով։ Ի՞նչ տաք է սերմերի համար հողում, ձյունե ծածկոցի տակ. այնտեղ չեն մրսի։

Կգա գարունը, ձյունի բյուրեղները կհալչեն, ջուր կդառնան։

Սերմերը ջուր կխմեն, ծիլեր կարձակեն։ Խոտեր, ծառեր ու ծաղիկներ դուրս կգան։

---

9. Առաջին ձյունը

Վայ, մայրիկ ջան, տես,
բակն ու դուռը լի,
ինչքան սպիտակ
թիթեռ է գալի։
Եսքան շատ թիթեռ
չեմ տեսել յես դեռ։
— Չէ, իմ անուշիկ,

թիթեռներ չեն եղ.
թիթեռներն անցան
ծաղիկների հետ։
Եղ ձյունն է գալի,
փաթիլն է ձյունի,
վոր կարծես սպիտակ
թիթեռնիկ լինի։

---

10. Զմեռ

Զմեռ է։ Սաթ ու ձոր սպիտակ են հագել։

— Ղա, ղա, ղա — մի բարձր տեղ կանգնել ու կռավում է ագռավը։



Ամենքը ձայները կարել են, մտել իրենց տունն ու բունը։

Միայն յերեխաներն են, վոր ամբողջ որը հաց ու ջուր մոռացել, ձնագնդի յեն խաղում և իրիկունը ձեռներին փչելով վերադառնում տուն։

— Նկարեցեք ձմռան տեսարաններ։

---

11. Յեր եկավ

Ձյուն կա դաշտերին,
սառույց գետերին.
բուքն է հեծեծում,
դռները ծեծում։
Այս յերը եկավ։

---

12. Մեր որատետրից

Մենք վորոշեցինք դիտել ձմռան գալը։

Կենդանի անկյան հերթապահները պետք է դիտեն ու գրեն, թե՝

1. Յերբ է առաջին ձյունը յեկել։
2. Յերբ է սառել գետը։
3. Ի՞նչ թռչուններ են մնում ձմռանը մեզ մոտ։

---

13. Ձյունը

Մենք վերցրինք ձյունով լիք բաժակը և դասարան բերինք։ Ձյունն սկսեց դանդաղ հալչել։ Յերբ բոլորովին հալվել եր, մենք տեսանք, վոր բաժակը լիքը չեր, և ձյունից գոյացած ջուրը պղտոր եր։

Ջուրը բաժակով մի քանի որ մնաց դասարանում, և մենք տեսնում եյինք՝ ինչպես նա ամեն որ պակասում եր։ Ուսուցիչը մեզ ասաց, վոր ջուրը գոլորշիանում է և ցնդում ոդի մեջ։

---

14. Վերմակը

Ձյունի բյուրեղներն ընկնում են գետին։ Ծածկում են գետինը սպիտակ, փափուկ վերմակով։ Ի՞նչ տաք է սերմերի համար հողում, ձյունե ծածկոցի տակ. այնտեղ չեն մրսի։

Կգա գարունը, ձյունի բյուրեղները կհալչեն, ջուր կդառնան։

Սերմերը ջուր կխմեն, ծիլեր կարձակեն։ Խոտեր, ծառեր ու ծաղիկներ դուրս կգան։

քեր գտավ. այդ հետքերով մենք իմացանք, թե ագռավը վոր կողմն է գնացել։

— Զմեռը ձյունն ինչ նշանակություն ունի բույսերի համար։

18. Զմռան եքսկուրսիան

— Ցերեխեք, յեկեք եքսկուրսիա գնանք,—ասաց ուսուցիչը։

— Ամեն ինչ ձյունը ծածկել է, ինչ պիտի տեսնենք,—հարցրեց մեկը։



— Մենք էլ կերթանք հենց այդ ձյունը տեսնելու,—պատասխանեց ուսուցիչը։—Ցերը տուն դառնանք, ամեն մեկդ թող պատմի, գրի ու նկարի այն, ինչ տեսել է եքսկուրսիայի ժամանակ։

Բոլորս համաձայնեցինք, և ուսուցիչն ասաց, թե ինչ պիտի անենք և գիտենք եքսկուրսիայի ժամանակ։

1. Վոր ձյունն է ավելի սպիտակ, ճն՝ վոր նոր է յեկել, թե ճն՝ վոր վաղուց է յեկել։

2. Ի՞նչ գույն է ստանում ձյունը հալչելու ժամանակ։

3. Չափեցեք ձյունի խորությունը պարտեզի զանազան մասերում ու իմացեք ձյունը գետնի վրա հավասար է նստած։

Մենք յերեք խմբակների բաժանվեցինք ու գնացինք։ Ձյուն չափողները վերջացրին աշխատանքը և սկսեցին ձնագնդի խաղալ։

Դպրոց վերադառնալով՝ մենք ձյունի բյուրեղները նկարեցինք ու գրի առանք այն բոլորը, ինչ տեսել ելինք եքսկուրսիայի ժամանակ։

19. Իմ սղոցը

(Կարդալու յե ուսուցիչը)

Մեզ մոտ ռմներ են ապրում։ Զմեռը նրանց յերեխաները տաք հագնվում են ու սարից սահնակներով սղոցում։

Ցեռ ել սահնակ ունեյի, բայց իմը շատ կոպիտ եր ու ծանր. հազիվ-հազ սղոցում եր։

Նստում եյի վրեն ու վոտներս գետնին խփելով մի կերպ ներքև գնում։

Իսկ են ռմեերի տղերքը գալիս եյին ու կայծակի նման կողքովս անցնում։

Կոլյա անունով ռուսի մի տղա կար. նրա սահնակը բոլորից լավն եր։

— Կոլյա,—ասացի եդ տղին.—մի ցուլյց տուր քո սահնակը, տեսնեմ եդ ինչպես ե շինած, վոր եդպես թեթև ե ու լավ սղղում ե։

Ցուլյց տվեց, տեսա. բարակ պինդ տախտակից եր շինած, տակից ել յերկաթ եր խփած։

— Ես յերկաթը վոր տեղից ե,—հարցրի յես։

— Արկղի կողքերի թիթեղից ե, կոոպերատիվում շատ կա։

Տուն յեկա, յեղբորս հետ սկսեցինք շինե. մուրճն եր, վոր պրծանք։

Ել չհամբերեցի, դուրս յեկա սարը, նստեցի. մի գնաց, մի գնաց վոր։

— Դուք սահնակ ունեք։
— Սահնակ շինեցեք։
— Սահելու համար սար պատրաստեցեք։

20. Ցրտատար ականջները

Այսոր մեծ դասամիջոցին մենք ձնե մարդ եյինք շինում։ Շատ եյինք ուրախանում։ Ենքան մեծ եր, վոր ձեռքով գլխին չեյինք հասնում։

Մեկ ել Պողոսն ինձ ձայն տվեց.

— Արտուշ, Արտուշ, ականջներդ բոլորովին սպի-

տակել են, ցրտատար են յեղել։ Շուտ ձյունով շփիր։

Ցես լսեցի նրան. կարծում եյի ցուրտ կզգամ։ Պողոսն ու Աշոտը վազեցին ինձ մոտ և առանց բան ասելու սկսեցին ձյունով ականջներս շփել։

Յերկու րոպեյից հետո բաց թողին, ասացին.

— Լավ, անցավ։ Ճարպ քսելու կարիք ել չկա։

Մինչև իրիկուն ականջներս մրմռում եյին։

— Ձեր ականջները ցուրտը տարել ե։
— Ի՞նչ եք արել այդ դեպքում։
— Ցուրտը տարած ականջները կամ ձեռքերը կարելի յե կրակին մոտեցնել։
— Ինչու չի կարելի, հարցրեք բժշկին։

21. Դասից ուշացող աշակերտը

— Արմիկ, վեր կաց, ուշ է արդեն,—արթնացնում եր տղային մայրը։

Արմիկը վեր կացավ, լուսամուտից դուրս նայեց, տեսավ՝ ընկերները դպրոց են շտապում։

— Շուտ, մայրիկ, հաց տուր, ուշացել եմ։

— Բա չե՞ս ամաչում, մի լվացվիր, յերեսդ մաքրիր, մրի մեջ կորել ե. մազերդ չես սանրել։

— Ժամանակ չունեմ, դպրոցից կուշանամ։

Արմիկը դպրոց վազեց. դասն սկսվել եր. աշակերտները նայեցին Արմիկին, ծիղաղները բռնեց։

— Տե՛սեք, տե՛սեք մի, Արմիկը վո՞նց ե յերեսը մրոտել։

— Ցերեսը նախշել ե, նախշել։

— Բա ձեռքերը։

— Դասերից հետո,—ասաց ուսուցիչը,—ժողով կանենք ու կվորոշենք, թե ինչպես կռվենք անմաքրության և ուշանալու դեմ։

Իսկ դու, սիրելիս, գնա նախասենյակ, յերեսդ ու ձեռքերդ լվա, սանրվիր, հետո դասի յեկ,—ասաց նա Արմիկին։

Քիչ մնաց, վոր Արմիկը լաց լիներ։ Բայց ի՞նչ արած, ինքն եր մեղավորը, պիտի լռեր...

— Ձեր դասարանում ել դասից ուշանում են։

— Ի՞նչպես եք կռվում դրա դեմ։

— Ի՞նչպես եք հետևում ձեր ընկերների մաքրությանը։

— Դպրոցում լվացարան ունե՞ք, վոր խաղից հետո ձեր կեղտոտած ձեռքերը լվանաք։

---

22. Քուրքը

Մի գյուղում յերկու վորբ մանուկ կային, մեկը՝ ինոը, մյուսը՝ տասը տարեկան։

Յերկուսն ել ուզում եյին կարդալ-գրել սովորել. բայց միայն մի քուրք ունեյին. ձմեռն ել շատ ցուրտ եր. ի՞նչ անեյին, յերկուսը միասին դպրոց գնալ չեյին կարող։

— Գիտե՞ս ինչ, Մուկուչ,— ասաց մեծը։

— Ի՞նչ,—հարցրեց Մուկուչը։

— Արի՛ եսպես անենք, մի՝ որ քուրքը յես հագնեմ, դպրոց գնամ, մյուս որը՝ դու։ Ինչ վոր յես կսովորեմ, քեզ կպատմեմ, ինչ վոր դու սովորես, ինձ պատմի։

Այդպես ել արին։

Մի անգամ ուսուցիչը հարցրեց Պարույրին։

— Ցեղբայրդ ուր է, ինչու դասի չի յեկել։

— Քուրք հագնելու հերթը իմն է,—պատասխանեց Պարույրը։

Ուսուցիչը ծիծաղեց և նույն որը աշակերտական կոոպերատիվի խորհրդում հարց բարձրացրեց, վոր վորբերին ոգնեն։ Վորոշեցին կոոպերատիվի ոգուտից վերարկու գնեն։

Մի շաբաթից հետո արդեն յերկուսն ել վերարկու ունեյին։

— Դուք չքավոր ընկերներ ունեք։
— Ի՞նչ ոգնություն են ստացել ձեր չքավոր աշակերտները։

---

23. Ընտանիքը

Զարիկին մի անգամ հարցրին. «Ձեր տանեցիք ովքեր են»։

Նա յել պատասխանեց՝ մեկ-մեկ մատը ծալելով. — «Հայրիկս, մայրիկս, տատիկս, յերկու յեղբայրս՝ Կարենն ու Գուրգենը, մեր փիսոն։ Հա, քիչ մնաց՝ մոռանայի, մեկ ել մեր Բողարը։ Ես ել յես»,— վերջացրեց Զարիկը՝ մի մատ ել ծալելով։

— Զարիկի պատասխանը ճիշտ է։
— Ձեր ընտանիքի անդամներն ավելի յեն, թվեցեք։

---

24. Հնարք

— Քնիր, բալիկս, քնիր,—ասում է մայրը յերեխային,—հանգիստ քնիր։

Պառկեցնում է, վոտքերը ծածկում ու գնում։

Լսում է յերեխայի լացը։ Շփոթված յետ է գալիս։

— Ինչու յես լալիս, բալիկս, ինչու։

— Դիտմամբ եմ լալիս, վոր գիշերը, յերբ վերմակս ընկնի, լաց չլինեմ։

---

25. Հոր ոգնականը

— Գիտեմ ինչ, հայրիկ, կամ դու անտառ գնա փայտի, յես տանը մնամ, կամ յես տանը մնամ, դու գնա անտառ փայտի։

— Դուք ել եք այդպես ոգնում ձեր տանը։
— Ի՞նչ աշխատանք եք կատարում դուք ձեր տանը։
— Ի՞նչ են անում ձեր ընտանիքի անդամները։

26. Հագուստը

Մարդը ձմեռվա ցրտից պաշտպանվելու համար քրդից թելեր մանեց և շոր գործեց, ամառվա զգեստի համար մարդն ոգտվեց վուշի և կանեփի թելերից։

Աշխատանքը ձեռքերով դանդաղ եր կատարվում։ Մարդն սկսեց մտածել, հնարեց կտորներ գործելու մեքենա, վորն այժմ մեզ համար ամեն տեսակի կտորեղեն ե պատրաստում։

— Հագիդ շապիկն ինչից ե։
— Ձեր գյուղում կտորներ գործում են։
— Ինչից են գործում։
— Ձեր գյուղում բամբակ կամ կանեփ ցանում են։
— Պատմեցեք, թե ձեր գյուղում ինչպես են հագնվում։

---

27. Ճախարակ

Մանիր, մանիր, իմ ճախարակ
լիսեռնիկդ պտտիր.
մանիր, թելեր հաստ ու բարակ,
ելիկիդ վրա փաթաթիր։
Ձեթ եմ ածել ականջներդ,
նոր շինել եմ շրավիկ,
դեհ, շուտ շարժիր լայն թևերդ,
վոստեր շինիր սուրուլիկ։

— Ձեր գյուղում ճախարակ գործ են ածում։
— Ուրիշ ինչով են թել մանում։
— Ի՞նչ են գործում թելից։
— Ինչով կարելի յե կտոր գործել։
— Եքսկուրսիա կատարեցեք դեպի մոտակա ջուլհականոցը, կտորի գործարանը. ծանոթացեք նրանց աշխատանքին։

28. Մեր նոր ընկերները

I

Մի որ մեր ուսուցիչը մեզ հայտնեց, վոր մեր դպրոցում մի նոր խումբ ե կազմակերպվելու քուրդ յերեխաների համար։

Մյուս որը տաս-տասյերկու քուրդ տղա-աղջիկ յեկան մեր դպրոցը։

— Գիտեք սրանք ովքեր են,—սկսեց խոսել ուսուցիչը.—մեր հարևան քուրդերի զավակներն են։ Մի ժամանակ, յերբ մեր յերկիրը խորհրդային չեր, հարուստները հային ու քուրդին կռվեցնում եյին իրար հետ։ Հայը քուրդին եր կոտորում, քուրդը՝ հային։

— Շատ քուրդեր թողին իրենց տունն ու տնտեսությունը, փախան՝ ազատվելու համար։ Միայն հարուստները, աղաներն ու բեկերը մնացին այստեղ։

— Հիմա մեզ մոտ խաղաղ ե. հայ, թուրք, քուրդ, վրացի աշխատավորները—բոլորը յեղբայրացել են։ Մեր հարևան քուրդերն իրենց ընտանիքով նորից մեզ մոտ են տեղափոխվել։ Նրանք վերականգնում են իրենց խանգարված տնտեսությունը։ Ծանոթացեք ձեր նոր ընկերների հետ ու սիրեցեք նրանց։

II

Մենք արդեն մտերմացել եյինք մեր նոր ընկերների հետ։ Դասամիջոցներին միասին ուրախ խաղում եյինք։

Շուտով ծանոթացանք նրանց ծնողների հետ։ Յերբեմն նրանք եյին մեզ մոտ գալիս, յերբեմն մենք եյինք նրանց մոտ գնում։

Մի ամիս չանցած՝ մեր քուրդ ընկերների թիվը տասներկուի հասավ։

Մի որ էլ մեր ուսուցիչը լատինական տառերով տպված գրքեր բաժանեց նրանց և ասաց.

—Վաղվանից սկսած դուք կսովորեք գրել ու կարդալ՝—նոր լատինական այբուբենով։

Մեր քուրդ ընկերները շատ գոհ եյին

29. Իմ տատը

I

Ինչ անում եյի, չեյի անում—վոչ մի կերպ չեյի կարողանում տատիս փոխեր։ Մի գլուխ հավատում եր իր աստծուն, սրբերին, մինչև անգամ սատանաներին։

— Մ՛յ տատի, դրանք բոլորը սուտ բաներ են, ինչ ես հավատում, թարկը տուր։

— Սուս արա, լեզուդ պապանձվի. մեղքի մեջ կորանք։ Զվից նոր դուրս եկած վառեկին մի տեսեք։

— Լավ, տատի, կտեսնենք։

Մի որ էլ մեր գյուղը ռադիո բերին։ Բոլորը խըրճիթ ընթերցարանն եյին հավաքվել։ Ռադիոն սկսվեց...

Լսեցինք հակակրոնական մի զրույց, հետո յերաժշտություն ու յերգ։

— Տատի, գիտես վորտեղից են խոսում ու յերգում։

— Վոր տեղից։

— Ցերևանից։ Բայց շուտով Թիֆլիսից, Մոսկվայից, արտասահմանից էլ կլսենք։ Ձայնը հեռվից ոդի միջով ե գալիս...

— Ա՛յ քեզ սատանայական բան։ Մարդը թամամ սատանա յե դարձել,—վրա բերեց տատիկս։

II

Տատս իր կյանքի վերջին որերում շատ բաներ տեսավ—տրակտոր, շրջիկ կինո, թատրոն, ոդանավ, ավտոմոբիլ...

Առաջվանը չեր, կամաց-կամաց փոխվում եր։ Սրբերի անունը կարծես մոռանում եր, ել շուտ-շուտ չեր տալիս։

— Չ՛ը, տատի, քո սուրբ Սարգսի ձին ու մեր ավտոմոբիլը, քո հեքյաթների թռչող խալիչեն ու մեր ոդանավը,—դրուստն ասա՝ վորն ե ճիշտը։

— Ե՛, բալա ջան, աշխարհքը փոխվել ե, հիմի ժամանակը ձերն ե. խավարի մեջ մեծացել ենք, տերտերն ինչ ասեր, հավատում եյինք։ Ձեր ժամանակը լավն ե։



30. Կենդանի անկյուն

Մեր կենդանի անկյունում արկղների ու ծաղկամանների մեջ բույսեր և ծաղիկներ կան։

Մեծ, յերկար արկղում մենք զանազան սերմեր ենք ցանել։ Վանդակներում փոքրիկ թռչուններ կան։

Մի մեծ վանդակում ել նապաստակ կա։ Այդ վանդակի մոտ միշտ հավաքվում են աշակերտները։

— Առ կեր, ես քեզ կաղամբ, ես ել գազար։ Ի՞նչ ես վախենում,—ասում եյին աշակերտները։

Բայց նապաստակը յերկար ականջները ցցած միշտ դողում եր։

Կենդանի անկյան հերթապահը բույսերը պետք ե ջրի, վանդակները մաքրի, կենդանիներին կերակրի։

— Կենդանի անկյուն ունենք դուք։
— Թե չունեք, կազմեցեք։
— Դիտեցեք բույսերը և կենդանիները ու գրի առեք։
— Նկարեցեք ձեր կենդանի անկյունը։
— Կավից նապաստակ, մուկ պատրաստեցեք։
— Գունավոր թղթից նապաստակ, մուկ կտրեցեք։

---

31. Թռչունների սեղանը

1.

Ցուրտ ձմեռ եր։ Ձյունը ծածկել եր գետինը։

Թռչունները քաղցած, անհանգիստ թռչկոտում եյին։ Մանկատան յերեխաները սենյակի պատուհանից նայում եյին դուրս։

Սուրիկն ասաց՝

— Յեկեք քիչ հաց տանք՝ ուտեն։

— Չե՛, յեկեք այնպես անենք, վոր նրանք ձմեռը բոլորովին սոված չմնան,—ասաց Շողիկը։

— Ի՞նչպես,—հարցրին յերեխաները։

— Ա՛յ, յեկեք նրանց համար սեղան պատրաստենք։

Բոլորը համաձայնեցին։

2.

Վերցրին մի լայն տախտակ, ծայրերին պարան ամրացրին և բակի ծառից կախեցին։

Այդ տախտակի վրա հացի փշրանքներ շաղ տվին։

Ճնճղուկները վրա թափվեցին, կերան։

Դրանից հետո յերեխաներն ամեն առավոտ թռչունների համար սեղան եյին պատրաստում։ Թռչուններն ուրախ ծլվլալով գալիս ուտում եյին։

Այսպիսով նրանցից շատերը ժահից ազատվեցին։

— Դուք ել թռչունների համար սեղան պատրաստեցեք։
— Կերակրեցեք նրանց. թռչունները մեր բարեկամներն են։

32. Ընտանի կենդանիներ յեվ վայրի գազաններ

Ընտանի կենդանիներ են՝
Ձին, կովը, յեզը, գոմեշը, այծը, կատուն, շունը։
— Ուրիշ։
Վայրի գազաններ են՝
Գայլը, աղվեսը, սկյուռը, բորենին։
— Ուրիշ։

---

33. Ով ինչ է ուտում

Ո՞վ է խոտ ուտում։

Եվ Ո՞վ։

— Կովը, եշը, վոչխարը։

Ո՞վ է միս ուտում։

Եվ Ո՞վ։

— Շունը, գայլը։

ՀԱՐՑԵՐ

1. Ինչպես պետք է ձին ջրել։
2. Ինչպես պետք է ձին թիմարել ու մաքրել։
3. Ինչ գույնի ձիեր կան։
4. Մի ժամում ձին քանի կիլոմետր է անցնում։
5. Մարդը մի ժամում քանի կիլոմետր է անցնում։
6. Ցերկու ժամում ձին քանի կիլոմետր կանցնի։
7. Ցերկու ժամում մարդը քանի կիլոմետր կանցնի։
8. Դուք մի ժամում քանի կիլոմետր եք անցնում։
9. Մարդը տասը կիլոմետր քանի ժամում կանցնի վոտքով, ձիով։

---

1. Ձին վազում է, իսկ ոձը։
2. Վորդը սողում է, իսկ ծիծեռնակը։
3. Մողեսը սողում է, իսկ ձուկը։
4. Ուրուրը թռչում է, իսկ մորեխը։
5. Կատուն մլավում է, իսկ ձին, կովը, խոզը, վոչխարը, շունը։
6. Խոզի ձագը գոճի չե կոչվում, իսկ ձիունը, կովինը, կատվինը, շանը։

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ձեր տանը քանի կով, ձի, չեզ և վոչխար կա։
2. Ընդամենը քանի գլուխ կենդանի կա։
3. Քանի հավ, բադ, սագ ունեք։
4. Ընդամենը քանի ընտանի թռչուն ունեք։

---

1. Ձեր գյուղում քանի կով կա։
2. Քանի հորթ կա ձեր գյուղում։
3. Ընդամենը քանի հորթ ու կով կա ձեր գյուղում։
4. Մի կովը որական ինչքան խոտ է ուտում։
5. Հինգ կովը որական ինչքան խոտ կուտեն։
6. Մի կովը հինգ որում ինչքան խոտ կուտի։

---

34. Գյուղից քաղաք

— Եզուց գնում եմ քաղաք,—ասաց գյուղացի Գասպարը Լևոնին,—կարտոֆիլ, քյալամ եմ տանում։ Մաղին ու Սաքոն անիվ ու ռունի յեն պատրաստել, նրանք ել են գալիս. ուզում ես, արի միասին գնանք։

— Հա, յես ել ածուխ եմ տանելու, փողի պետք ունեմ։ Քանի ճանապարհը բաց է, գնանք, թե չե հետո ուշ կլինի։

— Հայրիկ Ջան, մեզ համար քաղաքից նոր գրքեր և Լենինի պատկերը կբերես։

— Գասպար, թելը չմոռանաս. հայրիկ, սանդրը լավն առ,—պատվիրում եյին ամեն կողմից։

Ցերկար ճանապարհ անցան, հասան Ցերևան։ Բերածը ծախեցին։ Կոոպերատիվից առան կոշիկ, գլխարկ, չիթ ու շալ, վեդրո, լամպ—ամեն ինչ։

Պետհրատի խանութից իրենց ուզած գրքերը, նկարներն առան։ Գասպարը տեսավ որացույցը, չհամբերեց։

— Ես ել առնեմ. տանը չորս սովորող կա. թանգ

է, բայց ինչ արած, առնեմ, յերեխեքը շատ կուրախանան։

—

— Ձեր գյուղից ինչ են տանում քաղաք ծախելու։
— Քաղաքից ինչ են բերում ձեր գյուղը։
— Քաղաքն առանց գյուղի և գյուղն առանց քաղաքի կարող են ապրել։
— Ինչու չեն կարող։

—

35. Գյուղի առուտուրը

Կեղտոտ, աղքատ գյուղ եր մեր գյուղը։ Այդ գյուղում միայն մի լավ քարաշեն, յերկու հարկանի տուն կար, դուքանչի Հաթամի տունն եր այդ։



Վերևի հարկում ինքն եր ապրում, իսկ ներքևում իր խանութն եր։

Ես խանութում էլ հոտած ապրանք, էլ փտած չիթ չկար, վոր չծախեյին գյուղացիների վրա։

—

Հեղափոխությունը յեկավ։

Մեր գյուղի կյանքը փոխվեց։

Գյուղացիք փայտ սատացան. շենքերը նորոգեցին։ Դուքանչի Հաթամի տան կողքին կոոպերատիվ շինեցին, ապրանքով լցրին։

Գործը լավ գնաց. գյուղացիք Հաթամի խանութը ել վոտ չդրին։

— Ես կոոպերատիվը շինեցինք, հիմա յել դպրոցի շենքը կսկսենք, հետո յել էլեկտրոկայանը,— ասում եյին գյուղացիք։

Խանութպան Հաթամի գործերը թարսվեցին, տունն առանց վերանորոգման քոսոտվեց, ձայնը փորն ընկավ։ Նրա չաղ կինը՝ Յեղիսաբեթը լղարեց, չոփ դարձավ։

Ել են առուտուրը չկար, ել համով կերակուրները չկային։

—

— Ձեր գյուղում կոոպերատիվ կա։
— Համեմատեցեք կոոպերատիվն ու մասնավոր խանութը։
— Եքսկուրսիա գնացեք դեպի կոոպերատիվ։
— Ինչ ապրանքներ են ծախում կոոպերատիվում։
— Գրեցեք ապրանքների անունները։

36. Խելոք հաշիվ

Մի տղա կանգնել եր փռան առջև ու ախորժակով նայում եր տաք-տաք բլիթներին։

Ներս ե մտնում ու հարցնում.

— Ինչ արժե բլիթը։

— Վեցը՝ հինգ կոպեկ։

— Վեցը՝ հինգ կոպեկ, հա. ուրեմն հինգը՝ չորս կոպեկ, չորսն ել՝ յերեք կոպեկ. յերեքը՝ յերկու, յերկուսը՝ մեկ, իսկ մեկն՝ անփող։

Մեկն ինձ հերիք ե. տվեք ինձ մեկը։

—

37. Կոոպերատիվը

Մեր դպրոցի կոոպերատիվի ամբողջ ապրանքները տեղավորված են մի փոքրիկ արկղում։

Առավոտը այդ արկղը դնում ենք նախասենյակը ու աշակերտներին գրենական պիտույքներ ծախում։

Դասերից հետո արկղը դնում ենք ուսուցչի սենյակը։

Ապրանքները մեզ գյուղի կոոպերատիվն է տալիս եժան գներով. մենք էլ քիչ ոգուտով ծախում ենք աշակերտներին։

Ստացած ոգուտով անդամագրում ենք մեր չքավոր ընկերներին, նրանց տետրակ և ուրիշ պիտույքներ տալիս։

Մենք եքսկուրսիա գնացինք հարևան գյուղը՝ յոթնամյակի կոոպերատիվը տեսնելու։

Ա՛յ, այնտեղ գործը շատ կանոնավոր եր։ Կոոպերատիվին մի ամբողջ սենյակ են տվել։ Պահարաններ կան. կանոնավոր հաշիվ են պահում։

Վերադառնալիս ճանապարհին խոսում էինք, թե ինչպես անենք, որ մեր կոոպերատիվն էլ մեծացնենք ու կարգի բերենք։

— Կոոպերատիվ ունենք դպրոցում։

— Կապ հաստատեցեք մյուս դպրոցների կոոպերատիվների հետ։

38. Շարժվող տունը

Յերբ պապս առաջին անգամ վերադարձավ կայարանից, զարմացած պատմում եր գնացքի մասին։

— Ամենից առաջ՝ նա իր գնալու ժամանակն ունի. քեզ յերկու անգամ զանգով կանչում է. ուշացար—ուրեմն կմնաս։

Ուզածդ ժամանակ չես կարող ցած իջնել։ Դու պետք է իրեն հարմարվես. կանգնեց՝ կիջնես. չե՝ հետը կգնաս։



Վոչ ձի յե քաշողը, վոչ յեզ։ Վոչ ուտել կուզի, վոչ հանգստանալ։ Հարկավոր է միայն վառել և առատ ջուր տալ։

Սա մի շարժվող տուն է։ Վազում են իրար յետևից սենյակները, մեկը մյուսինքաշում, միասին շարժվում, միասին կանգ առնում։ Վա՛յ թե մեկը հերթից դուրս յեկավ.—կմնա։

Ես քաղաքում աչքդ խփում ես, բաց ես անում,—մի ուրիշ քաղաքումն ես։

Առաջ յեթե յերեք որում եյիր գնում, հիմա կես որն էլ բավական է։

Միայն չհասկացա, թե ինչու մեկ-մեկ ձենը

գլուխն ե գցում ու գոռում, սուլում, սար ու ձոր թնդացնում։

— Գնացք տեսել եք դուք։
— Պատմեցե՛ք ձեր տպավորությունները։
— Ինչով ավելի արագ կարելի չե գնալ—գնացքով, ձիով, թե վոտքով։
— Գնացք նկարեցե՛ք։
— Եքսկուրսիա գնացե՛ք մոտիկ կայարանը։

---

39. Էլեկտրականություն

Մեր տանն էլեկտրական թելերը անցկացրին, տանձի նման մի բան կախ տվին։

— Այ, կտեսնեք, թե ինչ լույս կլինի,—ասաց թելերն անցկացնող յերիտասարդը։



— Բանիդ կաց, խելքի տոպրակ,— ասաց մեր պապին.—ով ե տեսել, վոր շուշե տանձը լույս տա։ Գնա, քո պապին եդ բանը հավատացրու։

Ցես ել չեյի հավատում։ Վոնց թե՝ վոչ նավթ ե պետք, վոչ ել լուցկի։

Մթնեց։ Հայրիկս պատին մոտեցավ. մի բան վոլորեց, մեկ ել ինչ տեսնենք՝ տունը լուսավորվեց, են ել վոնց, ով եր տեսել ենպես պայծառ լույս։

— Տեսաք. ա՛յ, թե ինչ ե հնարել գիտությունը։ Համ լավ լույս ե տալիս, համ ել մուր չունի։

— Ձեր գյուղում ելեկտրականություն կա։
— Իմացեք ուսուցչից՝ ելեկտրականությունն ինչ ոգուտ ե տալիս։

---

40. Գայլերի վտանգը

(Ծեր վորսորդի պատմածը)

Մեր գյուղի մոտ գայլեր եյին յերևացել։ Ենքան ել շատ եյին։

Ամեն որ փորձանք եր պատահում։ Մի որ հորթ եյին տանում, մի որ վոչխար։

Պառավները մի լաց եյին դրել, մի լաց։

— Բա ամոթ չի՞, թվանքներդ առել եք ու նստել։ Գելերը մեր տունը քանդեցին։

Վոնց եյինք ամաչում։

Մի որ հավաքվեցինք, վորսի գնացինք։ Մենք տասը հոգի եյինք, քսան հոգի յել ուրիշ գյուղերից յեկան։

Եղ որը Հակոբի եշը սատկել եր· քաշ տվինք, տարանք, գյուղի մոտ մի այգու մեջ դրինք· թաղ կացանք։

Նոր եր սկսել մթնել։ Սաստիկ ցուրտ եր։ Մին ել հանկարծ գելի վոռնոց լսվեց, հետո մի ուրիշինը։ Մեկ-մեկու յեռևից գելերը յեկան, եշի դիակին վրա պրծան։

— Տղեր՛ք, ժամանակն է,—հրացաններդ պատրաստեցե՛ք,—ձայն տվի յես։

Գաղանների աչքերը մթության մեջ փայլ եյին տալիս։

Հրացանները մեկ-մեկու յեռևից լցնում եյինք ու կրակում։

Առավոտը 14 գելի լեշ հավաքեցինք, սելը դարսեցինք ու յեկանք գյուղը։

Գառամներն ել յերեսով չեյին տալիս։

41. Կարմիր բանակի տարեդարձը

Լսվեց յերաժշտության ձայնը։

— Գալիս են, գալիս։

— Կարմիր-բանակայիններն են գալիս։

Այսոր Կարմիր բանակի տարեդարձն է։

Բոլորը դեպի լուսամուտներն են վազում. փողոց են դուրս գալիս։

Ահա կարմիր հրամանատարը ժոխբագույն ձի նստած։ Նրա յեռևից գնում են յերաժիշտները։

Ինչքան մեծ թմբուկներ, ինչ պսպղուն փողեր, Ահա և դրոշակը։ Դրոշակի յեռևից գնում են զինվորները։ Ամեն մի շարքում ութ զինվոր է գնում։ Հավասար քայլերով են անցնում։



Յերաժշտությունը լռեց։

Առաջնորդը նշան տվեց։ Զինվորներն սկսեցին յերգել իրենց սիրած յերգը։

«Անվախ կռիվ կերթանք
հարուստների դեմ»...

— Կարմիր բանակ տեսել եք դուք։

— Ձեզնում Կարմիր բանակից վերադարձած գյուղացիներ կան։

— Իմացեք նրանցից Կարմիր բանակի մասին։

— Եթե ձեր գյուղում կամ քաղաքում կարմիր-բանակայիններ կան, եքսկուրսիա գնացեք նրանց մոտ, ծանոթացեք նրանց կյանքին և աշխատանքին։

42. Ամեն մեկն աշխատում է բոլորի համար

1. Դարբինն աշխատում է դարբնոցում, գերանդիներ, մանգաղներ, խոփեր և պատրաստում գյուղացիների համար։

2. Գործարաններում աշխատում են բանվորները։

Նրանք պատրաստում են կտորեղեն, կաշի և տեսակ-տեսակ մեքենաներ։

3. Հողագործ գյուղացին աշխատում է դաշտում։ Աշնանը վոսկեհատ ցորենը Ջրաղաց է տանում, ալյուր անում, քաղաք է բերում։

Քաղաքի բանվորներն առանց գյուղացու հացի ապրել չեն կարող։

4. Գյուղացին ծախում է ցորենը, շուկայից գնում է կտորեղեն, վոտնաման, գործիքներ։

Նա յել առանց քաղաքի բանվորների ապրել չի կարող։

Գյուղացին պետք է բանվորին, բանվորը՝ գյուղացուն։



5. Այս գրքի վրա աշխատել են գրաշարներն ու տպագրողները։

6. Ուսուցիչն աշխատում է դպրոցում, վոր յերեխաները գրագետ դառնան։ Յերեխաները սովորում են, վոր մեծանան, աշխատավորներ դառնան։

Բոլորն աշխատում են։

Ամեն մեկն աշխատում է բոլորի համար։

— Նկարեցեք դարբնի աշխատանքը։
— Նկարեցեք գյուղացու աշխատանքը։

43. Մարդը մենակ ապրել չի կարող

(Կարդալու յե ուսուցիչը)

— Պետք է փախչեմ ձեզնից, մենակ ապրեմ, մեն-մենակ,—բղավում եր, գոռում ութ տարեկան կուվարար Պետիկը։

— Միշտ կռիվ ես անում. մի ասա տեսնեմ՝ մարդկանցից հեռու վոնց ես ապրելու,—ծիծաղելով ասում եր հայրը։

— Անտառում պտուղներ կուտեմ... քիչ փող ունեմ... հաց կառնեմ...—ասում եր Պետիկը։

— Ուրեմն մարդկանցից կառնես. հացը մարդիկ են թխում։ Իսկ վոր ցուրտը սեղմի, ուր կգնաս, դայլի բունը կմտնես։

— Յես... յես... կգնամ, կգնամ ելի,—կմկմաց Պետիկը։

— Չե՛, առանց մարդկանց, սիրելիս, այս աշխարհում ապրել չես կարող։ Դե լաց մի՛ լինի, արի խոսենք։

— Տեսնենք, ով քեզ համար ինչ ե արել. այ, ես քո նոր կոշիկները վորտեղից են։

— Կոշկակարն ե կարել,—շշնջաց Պետիկը։

— Լավ. իսկ քո փայտե ձին։

— Վարպետ Սիրաքն ե շինել։

— Այ, յերկու մարդ արդեն քեզ համար աշխատել են։ Հիմա շուրջդ նայիր. յես իրերի անունները տամ, իսկ դու ասա, թե վոր արհեստավորն ինչ ե շինել, կամ վոր իրը գործարանից ե դուրս յեկել։

Պետիկը լացը մոռացավ։ Հոր ասածը դուր յեկավ նրան։

Յերկու մեծ յեղբայրներն ել մոտեցան ու սկսեցին խոսել, թե վոր իրը ով ե պատրաստել։

— Դուք ել փորձեցեք իմանալ՝ ձեզ շրջապատող իրերն ովքեր են պատրաստել։
— Ինչով են պատրաստել։
— Ինչից են պատրաստել։
— Եքսկուրսիա կատարեցեք մոտակա հյուսնոցը, դարբնոցը և ուրիշ արհեստանոցներ։

---

44. Իմն ե

Վարդանի ու Սուրիկի ծնողները մահացան։ Յերեխաները տեղ չունեյին ապրելու. նրանց մանկատուն տարան։

Մանկատան ակումբում մի մեծ փայտե ձի կար։ Սուրիկն ու Վարդանը վրա ընկան ձիուն.

— Ի՞մն է, ի՞մն է ձին,—ասում էր Սուրիկը։

— Չէ՛, ի՞մն է,—խլում էր Վարդանը։

Իսկ մյուս յերեխաները կանգնել ու ծիծաղում էին սրանց վրա։

— Ե՛յ, խելացիներ, ձին վոչ մեկինդ է, վոչ էլ մյուսինը. ձին բոլորինս է։ Մենք իմն ու քոնը չունենք. մեզ մոտ ամեն ինչ բոլորինս է։

— Եքսկուրսիա կատարեցեք մոտակա մանկատունը, ծանոթացեք սանների կյանքին։

---

45. Ի՞նչ կարող է անել կոլեկտիվը

Ձմեռ էր. շուտով ձյուն պիտի գար։ Լևիկի մայրը հիվանդ էր։ Արմիկը տեսնում էր, վոր Լևիկը հա-



ճախ դասի չէր գալիս, դասերը չէր պատրաստում, փայտի յեր գնում։ Հավաքեց ընկերներին ու ասաց.

— Լևիկը հայր չունի, մայրն էլ հիվանդ պառկած է։ Մենակ յերբ պիտի կարողանա ամբողջ ձմեռվա փայտը բերել։ Ցեկեք կոլեկտիվով ոգնենք։

— Գնանք, գնանք,—ձայն տվին պիոներները։

Հենց նույն որը ճաշից հետո նրանք խմբով անտառ գնացին, հավաքեցին չորացած ճյուղերը, կապեցին ու շալակներն առած՝ Լևիկենց տուն յեկան։ Այսպիսով կոլեկտիվը յերեք որում ահագին փայտ հավաքեց։

Սրանից հետո Լևիկը վոչ բացակայում էր և վոչ էլ անպատրաստ դասի գալիս։

— Ի՞նչ կոլեկտիվ աշխատանք եք արել դուք։

— Իմացեք ձեր ընկերներից վոքին կարող եք ոգնել ձեր աշխատանքով. ոգնեցեք նրան։

— Ձեր գյուղացիք ի՞նչ կոլեկտիվ աշխատանքներ են արել. առու փորել, ճանապարհը նորոգել։

---

46. Քաջ տղան

Մանուկների խումբն ուրախ-ուրախ դպրոց էր գնում։

— Հապա ով ինձ կբռնի,—ձայն տվեց Աշոտն ու սկսեց արագ վազել։

— Ցե՛ս, յե՛ս...—ձայն տվին մյուսներն ու վազեցին Աշոտի յետևից։

Հանկարծ դարպասից դուրս վազեց մի շուն ու նետվեց դեպի վազող յերեխաները։

Բոլորը պուկ յեկան ու փախան։ Միայն փոքրիկ Հայկը կանգ առավ, մատը թափ տվեց ու քնքուշ ձայնով ասաց.

— Կուտիկ, Կուտիկ, տե՛ս, չկծես ինձ հա՛, չկծե՛ս։

Շունը կանգ առավ ու դադարեց հաչելուց։ Հետո պոչը ճոճեց, մոտեցավ Հայկին ու քսմբսվեց նրան։

Հայկը շոյում եր շանը։ Պայուսակից հանեց մի կտոր հաց, գցեց շանը և վազ տվեց վախկոտ ընկերների յետևից, վոր փողոցի մյուս ծայրին կանգնած՝ մտիկ եյին տալիս։

— Նկարեցեք այս տեսարանը։

---

47. Ո՞վ է Լենինը

1.

Առաջ մեզնում Խորհրդային իշխանություն չկար։ Բոլորին Թագավորն եր կառավարում։ Գեներալներն ու հարուստներն ոգնում եյին Թագավորին։

Բանվորները շատ վատ եյին ապրում։

Առավոտը շուտ գործարաններն եյին գնում ու այնտեղ 12 ժամ աշխատում։ Իրիկունը շատ ուշ տուն եյին գալիս՝ հոգնած, քաղցած։

Հարուստները լավ զարդարված տներում եյին ապրում ու վոչինչ չեյին անում։ Իսկ բանվորներին աշխատանքի համար շատ քիչ փող եյին վճարում, հազիվ ցամաք հացի յեր ոգտում։

Ծանր եր բանվորների դրությունը։

«Ինչու բան չանողը լավ է ապրում, իսկ աշխատողը քաղցած մնում»,—հարցնում եյին նրանք։

Ցեվ բանվորներն սկսեցին կռվել այն բանի համար, վոր բոլորն աշխատեն, վոր գործարանները

պատկանեն վոչ թե հարուստներին, այլ աշխատող մարդկանց։

Այն մարդիկ, վոր կռվում եյին աշխատավորների համար, հեղափոխականներ եյին կոչվում, իսկ հեղափոխականների առաջնորդը Լենինն եր։

2.

Նա ասում եր բանվորներին ու գյուղացիներին

«Դուք վոչ թե հաց պետք է խնդրեք Թագավորից ու հարուստներից, դուք պետք է գենք վերցրած դուրս գաք Թագավորի ու հարուստների դեմ»։

Բանվորները հասկացան, վոր պետք է միանան և գյուղացիների հետ կռվեն հարուստների դեմ։

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ նրանք վռնդեցին հարուստներին և բանվորների ու գյուղացիների իշխանություն հիմնեցին, վորը Խորհրդային իշխանություն է կոչվում։

Այդ իշխանության առաջնորդ նրանք ընտրեցին Լենինին։

---

48. Պետյայի զբոսանքը

Իմ հայրը շոֆեր եր։ Նա Լենինին եր մատ ածում ավտոմոբիլով։

Մի անգամ յես կանգնած եյի մեր տան մոտ ու նայում եյի ավտոմոբիլին։ Հայրս ավտոմոբիլում նստած սպասում եր Լենինին։

Ցես կպա հորս, թե՝ ինձ մատ ածա։ Հայրս ասաց.

— Չի կարելի. շուտով Լենինը գալու յե։

Քիչ հետո Լենինը դուրս յեկավ և ուզեց ավտոմոբիլը նստի, ինձ նկատեց, ասաց.

— Ո՞ւմ տղան ես։

— Իմն է,—ասաց հայրս։

— Անունդ ի՞նչ է։

— Պետյա։

— Դե, նատի՛, Պետյա, ավտոմոբիլով մանելու։

— Ե՛, Վլադիմիր Իլյիչ, արժե՞ դրա հետ ժամանակ կորցնել,—ասաց հայրս։

Ցեռ կարծում էր, թե Լենինը կատակ է անում, տեղս կանգնած էր։

— Դեհ, շո՛ւտ, Պետյա, թե չե՞ ես շտապում եմ.— բռնեց ձեռքս, նստեցրեց ավտոմոբիլը՝ իր կողքին։



Ավտոմոբիլը գնաց։

Ցերբ մենք հասանք հրապարակին, Լենինը ինձ իջեցրեց ու ասաց.

— Նո՛ւ, Պետյա, վազիր տուն։

Ցեռ վազեցի տուն ու մորս ասացի.

— Լենինի հետ ավտոմոբիլով մանելու գնացի։ Հետո էլ պատմեցի իմ բոլոր ընկերներին։ Վռնց էին նախանձում։

---

49. Հունվարի 9-ը

Մեզնից տարիներ առաջ թագավոր կար։ Նա յոթ յերկիրը կառավարում։

Բանվորները շատ վատ էին ապրում՝ սոված, մերկ, առանց ուսումի։ Բայց չէին հասկանում, որ թագավորն է բոլորի պատճառը, այնպես գիտեին, թե նա բոլորի հայրն է։



Այդպես սովորեցրել էին նրանց տերտերներն ու տիրացուները։

Որեցոր սովը սաստկանում էր։ Ի՞նչ անեին։ Պետք էր գնալ թագավորի մոտ, ցավերը պատմել նրան, որ մի ճար անի։

Բանվորները վերցրին սրբերի ու թագավորի պատկերները ու խմբով շարժվեցին դեպի թագավորի պալատը։

Բայց ինչպես ընդունեց թագավորը։

Նա ուղարկեց իր զորքն ու հրամայեց կրակել ժողովրդի վրա։ Բանվորները զարմացան։

Այդ օրը շատ բանվորներ, կանայք ու յերեխաներ սպանվեցին։

Բանվորները նոր հասկացան, վոր թագավորն իրենց թշնամին է և վոչ թե հայրը, ու սկսեցին պայքարել նրա դեմ։

---

50. Հունվարի 21-ը (1924 թ.)

Ինչ է պատահել։ Ինչու այսոր դասարանը լուռ է։ Աշակերտները քիչ են յեկել։

Վոչ. բոլորն էլ յեկել են։ Խումբ-խումբ քաշվել են անկյուններն ու կամաց քչփչում են։ Լենինի մասին են խոսում։

Վոչ վոք չեր հավատում, թե Լենինը մեռել է։

Ժամը տասին դասարանները գնացին։ Բացի Լենինից ուրիշ բանի մասին խոսել չեյին ուզում։ Ժամը 12-ին հավաքվեցին դահլիճ։

Նրանց պատմեցին, թե Վլադիմիր Իլյիչը վորքան է աշխատել, վորքան է կռվել, պայքարել հարուստների դեմ։ Թե նա ինչ է արել բանվորներին ու գյուղացիներին ազատագրելու համար։



51. Մեր պսակը Լենինին

(Մոսկվայի մանկատան սանի պատմածը)

Ցերը մենք լսեցինք, վոր Լենինը մահացել է, վորոշեցինք նրա համար պսակ հյուսել։

Ցերկար աշխատեցինք, և հունվարի քսանվեցին, շաբաթ որը պսակն արդեն պատրաստ եր։

Ցերեք տղա, յերեք աղջիկ ընտրեցինք, վոր պսակը տանեն.

Ցես էլ վեցի մեջն եյի։

Այդ օրը շատ ցուրտ եր. տանից դուրս գալն անհնար եր, բայց վորոշեցինք՝ ինչ էլ լինի, Լենինի պսակը տանենք։

Արագ-արագ գնում եյինք։ Բայց յերբ մոտեցանք շենքին, ուր դրած եր Լենինի դագաղը, կանգնեցինք։ Այստեղ շատ-շատ մարդ կար, հերթով եյին թողնում.



Սկսեցինք խնդրել, և մեզ առանց հերթի ներս թողին։

Մեր առաջից տանում էին մի մեծ ու գեղեցիկ պսակ։ Ի՞նչ վատ ու խղճուկ եր մեր պսակը։

«Ցերևի չեն ընդունի»,—մտածում էինք մենք։

Բայց յերբ հասանք Լենինի դագաղին, հերթապահը մեր պսակը դրեց Լենինի վոտների տակ, իսկ այն մեծ պսակը մյուս սենյակ տարան։

Մենք անցանք Լենինի դագաղի մոտով։ Նրա դեմքը շատ գունատ եր, կրծքին կարմիր շքանշան կար։

Մենք անցանք, իսկ մեր յետևից բանվորները գալիս էին ու գալիս։

52. Լենինի թաղումը

(Մոսկվացի մի տղայի պատմածը)

Այսոր թաղեցին Վլադիմիր Իլյիչին։

Ցեռ շատ էյի ուզում թաղմանը ներկա լիներ։

Շատ վաղ արթնացա ու գնացի։ Այն շենքի մոտ, ուր դրած եր Լենինի դագաղը, շատ մարդ կար։

Որը ցուրտ եր. յես միքանի անգամ յեկա տուն, տաքացա ու վերադարձա։

Լենինի դագաղն ուսերին՝ բնավորների շարքերը շարժվեցին դեպի Կարմիր հրապարակը։ Թաղման մարշն էյին նվագում.

Ժամը 4-ին դագաղն իջեցրին դամբարանը։

Սուլիչները սուլում էյին, թնդանոթները կրակում։ Ամբողջ Խորհրդային յերկրներում 5 րոպե դադարեց ամեն մի շարժում։

Խորհրդային յերկրների բանվորներն ու գյուղացիները թաղում էյին իրենց ամենասիրելի ուսուցչին, ամենալավ բարեկամին։

---

53. ՑեՐը ե լինում

Զյունն ե հալչում,
խոտը կանաչում,
ծաղիկը ծաղկում,
որը յերկարում։
Այս յերը ե լինում։

---

54. Անցան

Հեյ Ջան, անցան
բուք ու բորան,
ձմեռ պապին
ձյունի հետ.
հոմն ե խաղում
սար ու դաշտում,
որը պայծառ,
բուրավետ։
Հրես կգան
շարան-շարան
նախշուն հավքեր
յերգեցիկ.
դաշտ ու անտառ,
այգի ու սար
շոր կհագնեն
գեղեցիկ։

---

55. Ի՞նչ պետք է դիտել գարնանը

1.

1. Յերբ սկսեցին առվակները խոխոջալ։



2. Թռչուններ

2. Դիտեցեք՝ ձյունից ազատված տեղեր կան։ Թռչուններ կան այնտեղ։ Ի՞նչ թռչուններ են։

3. Նկարեցեք նրանց։

4. Դիտեցեք և նշանակեցեք որացույցներում սրագիլների, կռունկների, սարյակների, հոպոպների դալու ժամանակը։

3. Բույսերն ու միջատները

1. Ամենից շուտ ձյունը վերտեղ հալվեց։

2. Ի՞նչ տեսաք ձյունի տակ։

3. Դիտեցեք՝ ի՞նչ միջատներ են թռչում ուռենու շուրջը։

4. Նշանակեցեք՝ յերբ դուրս յեկան ուռենու առաջին տերևները։

5. Վորոնեցեք գարնան առաջին ծաղիկները ու բույսերը և նկարեցեք։

6. Չափեցեք ծառի վորևե ճյուղը գարնանը, ամառը և աշնանը։

7. Նշանակեցեք՝ յերբ առաջին անգամ տեսաք մեղու, իշամեղու, թիթեռ, մայիսյան բզեզ, բզեզ։ Նկարեցեք սրանք։

4. Պարտեզը, բանջարանոցն ու դաշտը

1. Նշանակեցեք՝ յերբ են ծաղկում խնձորենին, տանձենին, սալորենին, կեռասենին, բալենին։ Ի՞նչը շուտ յերևաց — ծաղի՞կը, թե տերևը։

2. Դիտեցեք՝ նույն բողբոջներից են դուրս գա-

լիս ծաղիկներն ու տերևները, թե տարբեր բողբոջներից։

3. Գրեցեք՝ յՔրբ սկսեցին արտերը վարել։ ՅՔրբ սկսեցին ցանել գարին, կորեկը, բրինձը, բամբակը։

4. Նշանակեցեք՝ յՔրբ սկսեցին վարել բանջարանոցը։

5. ՅՔրբ տնկեցին կարտոֆիլը, կաղամբը։ ՅՔրբ ցանեցին կոտեմը, բողկը, ռեհանը, պամիդորը, բաղբջանը, պղպեղը։

Վոր բույսը յՔրբ շիթիլ արին։

56. Վերջին փաթիլները

Զարահեղի ու կռվարար
փաթիլները պաղ ձյունի
ուրախ խաղում, գարկում իրար,
հրհրում են մին-մինի։
Ապա հոգնած իջնում գետին,
գրկվում են իրար հետ
ու ջուր կտրած, յերգով ուժգին
առաջ վազում դեպի գետ։

---

57. Ձնծաղիկ

Սառը ձյունի
սառը գրկում
մի ծաղիկ ե
ծլում, ծաղկում՝
թերը քնքուշ
թերը սպիտակ,
աչիկները
բաց-կապուտակ։

Ձյուն ու ծաղիկ...
ա՛յ քեզ զարմանք։
Ձյուն ու ծաղիկ
ունեն մի կյանք։
Դա ձմեռվան
մի ծաղիկ ե։
Ձյունից ծնված
ձնծաղիկ ե։

---

58. Գարուն

Ձմեռն անցավ,
յեկավ գարուն,
ձյունը հալվեց,
լցվեց առուն,
արև ծագեց
արևելքից,
ծիլեր քաշեց
գետնի տակից։
Ծառը պտկեց,
տվեց բողբոջ,
աղբյուրն հանեց
անուշ խոխոջ։
Արտա գնաց
ծնած մաքին,
տվեց անուշ
կսթը ձագին։
Մուկ ու մողես,
միջատ, զեռուն
արևն ելան,
յելան գարուն։

59. Գարուն

Ծանր ձմեռն անցել եր, ցուրտը կորել. յեկել եյին գարնան տաք օրերը։

Մենք շատ եյինք ուրախ. ձմռան ծանր շորերը դեն գցեցինք, սկսվեցին գարնան խաղերը։

Դպրոցում մեր աշխատանքները փոխվեցին։ Մեծ աշակերտներն զբաղվեցին մեր դպրոցի հողամասով։

Մենք ել քարերը մաքրեցինք, մեզ համար մի անկյուն վերցրինք, մարգերը սարքեցինք, աշխատանքը շատացավ։

Ամեն մի խումբ իր գործն եր կատարում, ամեն մի խումբ աշխատում եր իր անկյունն ավելի լավ կազմակերպի։

Տան գործն ել եր շատացել. խոտը հատել եր, անասուններին հանդն եյինք տանում։

Փեթակների առաջ ծաղիկներ ցանեցինք։

Մեր դպրոցը պատրաստվում եր տոնելու ծառատունկի տոնը։

Մեր կենդանի անկյունում մենք լոզունգներ կպցրինք.

«Ամեն մի աշակերտ մի ծառ տնկի»։

«Պիոներ, յերկու ծառ տնկիր»։

«Տնկեցիր — ջրիր, խնամիր»։

---

60. Առավոտ

Արեգակը դուրս ե յեկել պսպղալով,
շողքը յերդից ներս ե ընկել շողշողալով,
ծիտը ծառին կըշկշում ե ծլվլալով,

ձորում առուն քըշքշում ե վըշվշալով,
ծուլ տղայի քունն ե տարել խըռմփալով,
կոշիկները շունն ե տարել մըռմռալով։

---

61. Հատիկի զարթնելը

Յորենի հատիկը պառկած եր հողի տակ։

Յեվ հատիկի մեջ քնած եր փոքրիկ սաղմը։ Քնած եր, ինչպես մի փոքրիկ մանկիկ տաք որորոցի մեջ։ Քնած եր ամբողջ ձմեռը։

Գարնան արևի շողը յեկավ տաքացրեց։

Յեվ հատիկի մեջ զարթնեց սաղմը։ Զարթնեց, սաստիկ քաղց զգաց, սկսեց ծծել իր մոտի պաշարը։

Ծծեց, ծծեց ու մեծացավ։ Պատռեց պարուրները ու արմատները խրեց ցած, փա փուկ հողի մեջ, նոր կերակուր վորոնելու։

Իսկ արևի ջերմությունը շարունակ քաշում եր նրան վերևից, ու սաղմը ձգվում եր դեպի այն կողմը, դեպի վեր։

Ձգվեց, ձգվեց, ու նրա դալար ծիլը դուրս նայեց հողի մի կոշտի տակից։

Ինչ տաք եր, ինչ պայծառ ու ինչ ազատ նրա շուրջը։

---

62. Մարտի ութը

Մարտի ութն եր։

Դպրոցը զարդարել եյինք։ Պիտի տոնեյինք։ Քաղաքից մարդիկ պիտի գային։

Գյուղացիները հավաքվել եյին դպրոցի բակը, խոսում եյին։

— Կանայք ել մարդ դառան,— ասում եր կուլակ Սեթոն,—կնիկն ինչ ե, վոր տղամարդի գործի մեջ խառնվի. բա նամուսով աղջիկը դպրոց կգնա...

Ու եսպես անվերջ։

Մեկ ել լսվեց ավտոմոբիլի ձայնը, ու գյուղ մտավ մի գեղեցիկ կապույտ մեքենա։

Յեկածները իշան ու գյուղացիների հետ մոտեցան դպրոցին։

Սկսվեց միտինգը։

Խոսում եր քաղաքից յեկած մի բանվորուհի։

Ասում եր, վոր առաջ կանայք տղամարդի իրավունքները չունեյին։

Կանանց գյուղերում ուսումի չեյին տալիս։

Ասաց, վոր յեթե Խորհրդային իշխանությունը չլիներ, կանայք այդպես ել կմնային, ձայնազուրկ, անուսում ու ճնշված։

— Յես,—ասաց բանվորուհին,—գավգործկոմի անդամ եմ և տղամարդկանց հետ միասին կառավարում եմ գավառը։

Հետո խոսեց մեր գյուղից մի կին. ասեց, վոր մեր գյուղումն ել են սկսել կանանց վրա ուշադրություն դարձնել։

— Կանայք լիկկայան են գնում։ Հիմի յել կոլեկտիվ տնտեսության մեջ մտուր են կազմակերպել և կանայք շատ ազատ են զգում։

Միտինգից հետո մենք ցերեկույթ տվինք և մարտի ութի առթիվ վոտանավորներ արտասանեցինք։

---

63. Անասնաբուծների կոլեկտիվը

I

Զքավոր գյուղացիներ եյին։

Մինը մի յեզ ուներ միայն, մյուսը՝ մի վոզորմե-լի արոր, յերրորդը՝ մի յերկու գերանդի, չորրորդը՝ վոչ այս, վոչ ել այն։ Իրենց մի կտոր հողը մշակելու

ու բերք ստանալու համար ստիպված էին կուլակներին դիմել։

Կուլակն էլ մի քանի որ յեզն ու արորն ուղարկում էր սրա, նրա արտը, իսկ կալին ցորենի կեսը վերցնում։ Չքավորը դառն աշխատում էր, դատարկ նստում։

II

— Եսպես չի լինի, հարևան,—ասաց մի որ Հարութը Ստեփանին,—ուրիշ գյուղերում, ասում են, մեզ պես չքավորները միանում են, ու միասին աշխատում։ Պետությունն էլ, ասում են, ոգնում է. սերմ է տալիս, փող է տալիս, մեքենա յե տալիս։

— Լսել եմ, բայց յես ու դու ինչ կարող ենք անել. այբենի կտոր չկա փորներումս. մի գիտուն մարդ է պետք։

— Եղ վոչինչ, իմացող կգտնենք։ Այ, բատրակ Մեսրոբը քաղաքում շատ է կացել, գիտի։

Ու Հարութը և Ստեփանը վեր կացան, գնացին Մեսրոբի մոտ։

Խոսեցին, մտածեցին ու վճռեցին, վոր կոլեկտիվ տնտեսություն կազմեն։

Յուցակագրվեցին 16 ընտանիք—չքավոր գյուղացիներ ու բատրակներ։

Նստեցին ժողովի, գյուղի ուսուցիչն էլ, գրեց ինչ վոր հարկավոր է, միության անունն էլ դրին «Անաստվածների կոլեկտիվ» և Մեսրոբը, Ստեփանն ու ու Հարութը, վորպես պատգամավորներ, քաղաք գնացին։

III

Յերկու տարի յեր անցել։
Գարուն եր։

Աշխատանքը յեռուռ եր «Անաստվածների» կոլեկտիվում. առաջվա անխոս ու տխուր գյուղացիները ուժ և յեռանդ էին ստացել. հանաքներ էին անում, ասում, խոսում, ծիծաղում։

— Մի ես հանրակացարանն էլ շինենք, էլ քեֆներիս քեֆ չեր հասնի,—ասում եր Ստեփանը։

— Կշինենք, շատը շինել ենք, քիչն էլ կշինենք,—պատասխանեց Մեսրոբը։

— Այ տղերք,—լսվեց Հարութի խռպոտ ձայնը,—բա դաշնակների որոք ինչու էյինք ենքան ախմախ. բա մեր ես խելքը վոր տեղ եր, այ ընկեր նախագահ։

— Վորտեղ եր։ Չեմ իմանում. ժամումն եր ու մին էլ քյոխվի մտրակի ծերին։ Բա ժամ գնացողի գլխին խելք կլինի. հիմարացրել էյին մեզ եղ տերտերները,—պատասխանեց Մեսրոբը։

— Դրուստ վոր է. դրա համար էլ մենք հիմի անաստված ենք, անաստված...

— Հաստատ մնա բայլևիկը, հլա լավ որերը հետո յեն գալու,—ասաց Ստեփանը ու շարունակեց կացնով հարվածներ իջեցնել չորացած թթենու արմատին։

---

64. Գարուն

Զուգվել են կրկին
անտառ ու այգի,
վազում է ուժգին
ջուրը գետակի։

Հավքերը սիրուն
համերգ են կազմել,
արտում ու հանդում
յերգ ու հորովել։

Թիթեռներն ուրախ
թռչում են դես-դեն.
Լան, տեսքիդ մատաղ,
գարուն է արդեն։

65. Մանուշակ

Կապույտ գլխով, կանաչ վոտով,
յես ծաղիկ եմ անուշ հոտով։
Թեև տունկս փոքրիկ է, ցած,
թփերի տակ միշտ թաց կացած,
բայց իմ փունջը իբրև զարդ
տեսնում է միշտ ամեն մարդ.
յես եմ սիրում գարնան գուշակ,
իմ անունս է մանուշակ։

---

66. Ջրվեժ

Ֆչքչալով սարի լանջից
ցած է իջնում
Ջուրը բարակ.
ցած է իջնում ձորի միջից,
դուրս է փախչում
արագ-արագ...

Դուրս է փախչում ձորի միջից,
առաջ վազում
վոլոր-մոլոր,
են անավոր ու մութ կիրճից
գալիս հասնում
անդունդը խոր...

67. Ջուրը

Ամեն ջուր մեզ պիտանի չե։

Ջուր կա, վոր մեզ ֆնասում է ու հիվանդացնում. հենց վոր մարդ խմում է, փորը ցավում է, լուծ է ընկնում, վարակիչ հիվանդություն է ստանում։

Ցերը մարդ վատ ջրով է լվացվում, աչքերը ցավում են, յերեսի ու կաշվի վրա բշտիկներ են դուրս գալիս

Ինչպես պիտի ճանաչել լավ ջուրը։

Ցեթե ջուրը պարզ է ու ապակու պես թափանցիկ, յեթե նրա մեջ կեղտոտություններ չեն լողում, յեթե ամանի տակ կեղտ չի նստում, ջուրը լավն է։ Այդպիսի ջուրը վոչ գույն է ունենում, վոչ հոտ ու ֆնասակար չի։

Ամենալավ ջուրը աղբյուրների ջուրն է։

---

68. Առվակներ

Կկլան առվակները
պլպլում են,
պլպլան առվակները
կկլում են.
կկլում, պլպլում ու գնում են.
պլպլան առվակները
փրփրում են,
փրփրան առվակները
կկլում են,
կկլում, պլպլում ու գնում են։

---

69. Հատիկ

Լույսը բացվում է, շուտ արար գնամ,
պատռեմ սուր խոփով յես կուրծքը հողի,
իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ
մինչև որերը ամռան արևի։

---

70. Ցանքը

Լավ իմացիր ցանքսի ժամանակը, չուշացնես, ամեն մեկ որը հաշվի։

Այնպիսի յեղանակ ընարիր, վոր վոչ չորային լինի, վոչ խոնավ, վոչ ել սառատիկ քամի։

Լավ կանես՝ իրիկունը ցանես, վոր առավոտը հատիկները ցողախառն տափնես։

Սերմն առաջուց պիտի պատրաստես։ Սերմն ընտիր պիտի լինի, մաքուր, խոշոր, լիքը։

Լավ է՝ սոված մնաս, բայց լավ սերմ ցանես։ Լավ սերմի արմատները խոր են գնում, ցրտից ու յերաշտից այնքան չեն վախենում։

---

71. Շարքացանով

I

Գնացի շարքացանը տեսնելու։

Գարնան սիրուն առավոտ եր։ Կոլտնտեսության դաշտն ահագին տարածություն եր բռնել։ Տրակտորը պըտպըտալով առաջ եր գնում՝ քաշ տալով իր հետևից շարքացանը։ Ցորենի հատիկները շարքացանի տակից կախ ընկած խողովակներով հավասարաչափ գլորվում եյին հողի մեջ։

— Ա՛յ, ի՞նչ եմ ասում, — խոսողը գյուղացիներից մեկն եր.—ինչպե՞ս ե մեքենան ամեն բան հեշտացնում։ Թե չե՝ առաջ շատ դժվար եր։ Ցորենը փեշդ պիտի լցնեյիր, ձեռով շաղ տայիր. մեկ տեղ շատ ընկներ, մեկ տեղ՝ քիչ. եստեղ խիտ բուսներ, ենտեղ—նոսր։ Վորն ել խորը հողի տակ ընկներ, ել լույս աշխարհ չգար։

— Եդ դեռ վոչինչ,—վրա բերեց մի ուրիշը.—ասում են՝ շուտով հնձող ու կալսող ել կբերեն. եդ հն առանց տեսնելու հասկանալ չի լինում։

II

Կոլտնտեսության ցորենի արար գարմացրել եր բոլոր գյուղացիներին։ Ամենքը գնում եյին շարքացանի արդյունքը տեսնելու։ Ցես ել գնացի։

— Ա՛յ թե ցորեն ե, հա,—ասում եր մեկը։

— Ինչքան ել հավասար ցանված,—վրա յեր բերում մյուսը։

—Տեսե՛ք, բոլոր հասկերն ել միասին են հասունանում, ել խակ ու հասած իրար կողքի չեն լինում։

— Շատ ել քիչ սերմացու յե գնացել։ Ձեռքով ցանածն ուր։

Մյուս որը դպրոցում յես պատմեցի շարքացանի մասին։

---

72. Սերմի գտելը

Մեր գյուղում կոլեկտիվ տնտեսություն եր կազմակերպվել։

Քաղաքից մեքենաներ եյին ստանում։ Պատրաստվում եյին գարնանացանին։

Գյուղացիները հավաքվել եյին մի մեքենայի մոտ ու զարմացած նայում եյին։

Կոմյերիտական բատրակ Սամվելը մեշոքով ցորենը լցնում եր մեքենայի մեջ, իսկ նրա ընկեր Սուրենը անիվն եր պտտում։

Ցորենը մաքուր, զտված թափվում եր մի կողմ, մոլախոտերի սերմը, քարը, հողը՝ մյուս։

— Եդ ինչի՞ յես ցորենը կես անում, խելոք— հարցրեց գյուղացիներից մեկը։—Պետությունից եք ստացել—չեք ափսոսում։

— Սերմը, Վարդան բիձա, մաքուր պետք է ցանել, վոր մոլախոտերը արտում չբուսնեն ու ցորենի աճմանը չխանգարեն,

Ցորենը զտելով չի պակասում։

Ցեթե մաքուր սերմ ցանես, բերքդ լավը կլինի։

— Ճիշտ է, գիտես, Վարդան,—ասաց մյուս գյուղացին,—մեր մոտի ռուսներն ել են սկսել սերմը զտել։

Ցերևի մի բան գիտեն։

Լավ կլինի մենք ել փորձենք, թե չե անցած տարին մոլախոտերն արտը բռնել եյին։ Ցանածի կեսը չքհավաքեցինք։

---

*
* *

Արի գնանք, յեզը ջան,
համ վար անենք, համ ել ցան,
աշխատանքի որերը
հրես յեկան, մոտեցան։
Գուլթանը դու կքաշես,
մաճկալդ ել կլնեմ յես,
են գլխիցը ես գլուխ
ես փեշակն ե պահել մեզ։

73. Արոր

Ահա ծագեց կարմիր արև,
տաք և պայծառ ե որը.
դեհ, քաշեցեք, սիրուն յեզներ,
առաջ տարեք արորը։
Վարը վարենք, ակոս փորենք,
խոր ակոսներ հողի մեջ,
սերմը ցանենք, վոր հունձ հնձենք,
խուրձեր դիզենք կալի մեջ։

---

74. Մեր դասարանի փորձից

Գարնան սկզբին մենք վորոշեցինք դասարանում բույսեր ցանել։

Վերցրինք չորս ծաղկաման. առաջուց Իրջեցինք լոբու, սիսեռի, ցորենի սերմերն ու ցանեցինք ծաղկամաններում։

Ցերեք ծաղկամանը հերթապահն ամեն որ ջրում էր, իսկ չորրորդը՝ վոչ։

Ցերեքում միքանի որից հետո կանաչ ծիլեր յերևացին, չորրորդում վոչ մի փոփոխություն չկար։

Մենք հողը փորփրեցինք և տեսանք, վոր սերմերն ինչպես ցանել եյինք, այնպես էլ մնում եյին։

Մենք հասկացանք, վոր սերմն առանց ջրի չի կանաչի։

— Եվ ինչ է հարկավոր բույսերին։

— Դուք էլ փորձեր արեք։

— Դիտեցեք. ձեր դիտողությունները գրեցեք որատետրում։

---

75. Մեր պարտեզը

Մեր պարտիզի գետինը կակղել էր, ձյունը հալվել, վերջացել էր։ Թռչուններն արդեն յեկել եյին։

Մի որ գնացինք, վոր տեսնենք՝ ծառերը պտկել են, թե վոչ։ Խնձորենին, կեռասենին ու տանձենին արդեն պտկել եյին։ Հայրիկս նորոգում էր ցանկապատը, վոր հավերը պարտեզ չմտնեն։

— Ցերեխեք, ցաքատը պետք է սրել տալ, չոր ճյուղերը կտրելու ժամանակը մոտ է.— ասաց հայրիկս։

Որ չեր լինի, վոր նա պարտեզ չգնար, մի բան չաներ։

Պարտիզի գլուխցավանքը 'շատ է, բայց ամառն ինչքան լավ է։

---

76. Մեր բանչարանոցը

Ցերը դպրոցի բակը խմբերի բաժանեցին, մեզ էլ մի կտոր հող տվին։

— Տեսնենք՝ դուք ինչ եք անելու,— ասում եյին մեծ աշակերտները։

Մենք չգիտեյինք ինչից սկսենք, ինչ ցանենք։ Գործն առաջ չեր գնում։

— Ցեկեք ձեզ ոգնեմ,— ասաց Վարդանը։

Նա շատ բան գիտեր, պիոներ էր։

Նրա հետ մենք մեր հողամասը մարգերի բաժանեցինք։

Հետո այդ հողը պարարտացրինք աղբով, քարերից մաքրեցինք։ Վարդանը մեզ սերմեր տվեց. ինքը տանը թրջել էր, ու սերմերն արդեն ծլել եյին։

Ցանեցինք լոբի, սիսեռ, տակ, բողկ, տեսակ-տեսակ ծաղիկներ։

Միքանի գլուխ սոխ էլ տնկեցինք։ Ջրեցինք, հեր-

թապահները նշանակեցինք՝ մեր բանջարանոցին հրակելու համար։

— Տեսեք ես առաջիններին, ե՛, վերջը գործը գլուխ բերին,—ասում էին մեծ աշակերտները մեր բանջարանոցի կողքով անցնելիս։

— Ձեր գպրոցը բնջարանոց ունի՞։
— Ձեր խումբն իր անկյունն ունի՞։
— Ի՞նչ եք ցանել ձեր անկյունում։
— Ի՞նչպես եք բաժանել ձեր մեջ աշխատանքը։
— Ի՞նչպես եք հետևում բանջարանոցին։

---

77. Պարտիզի յեվ բանջարանոցի վնասատուները

Ցեթե թրթուռները դուրս գան, կտրեցեք ծառի կամ բույսի ճյուղը, վորի վրա թրթուռ ե նստած. բերեք դպրոց, ջուրը դրեք ու տուփով ծածկեցեք։

Տուփի մի պատը կտրեցեք, տեղը թանզիֆով փակեցեք. մյուս պատերը մախաթով ծակծկեցեք։

Դիտեցեք և պատասխանեցեք հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ ե թրթուռը—տերև՞ ե, ծաղի՞կ, թե՞ մի ուրիշ բան։

2. Բույսին ի՞նչ վնաս ե տալիս։

3. Փնտռեցեք այդ վնասատուի հետքերը ձեր բանջարանոցում կամ պարտիզի ծառերի վրա։

4. Դիտեցեք՝ ո՞վ ե ոգնում մարդուն այդ վնասատուի հետ կռվելու։

Այդ նպատակով գնացեք բանջարանոց կամ պարտեզ ու հետևեցեք՝ ի՞նչ թռչուններ են հավաքվում այնտեղ և ի՞նչ են անում։

Ցեթե գիտեք նրանց անունները, նշանակեցեք։

Ցեթե նկատեք այնպիսի թռչուններ, վորոնց առաջ յերբեք չեք տեսել, նշանակեցեք նրանց մեծությունը, գույնը։

---

78. Պահապաններ

Գարուն ե. արևը տաքանցում ե։ Պապիկը նստած արկղ ե շինում տախտակներից։

— Ի՞նչ ես անում, Պապի՛կ։



— Տնակ եմ շինում, տնակ, շուտով պահապանները կգան, պետք ե տեղ տալ նրանց։

— Ի՞նչ պահապաններ, ո՞վքեր են։

— Մի՞թե չգիտեք. մեր ժիր, խելոք սարյակնե-

ը, վոր մաքրում են բանջարեղենը վորդերից ու խխունջներից։

— Եվ ինչ ոգտավետ թռչուններ գիտեք։

---

79. Պատիկ ծիտը

Պատիկ ծիտ եմ
Ծտի ցեղից,
Ծտաստանի
Ծտոց գեղից։
Իմ պապերին
Ծիտ են ասել,
Ծիտ անունը
ինձ է հասել։
Հիմի յել յես
Ծիտ պապիս պես
կծլվամ,
կթռվռամ։

---

80. Կովն ու գիլագռավը

Մեր կովը բակն եյին կապել, խոտ եր ուտում։ Մեկ ել հանկարծ մի գիլագռավ յեկավ, մեջքին նըստեց ու սկսեց մեջքը կոտել։

Զլինի թե կովի մեջքը ցավացնի։

Իսկի յել չե։

Կովը հանգիստ կանգնել է իր համար, խոտ է ուտում, իսկ գիլագռավը կոտում է հա կոտում։

Բայց ինչու։

Ահա թե ինչու։ Այժմ գարուն է, կովերը փոխում են իրենց մազը. գիլագռավն ել գարնանը բուն է շինում. մազ է պետք, վոր ձվերի համար տաք տեղ պատրաստի։

Գիլագռավը հանում է կովի հին մազերը. համ նրան է ոգուտ տալիս, համ իրեն։

Կովի կաշին քոր է գալիս, պատերին ու ծառերին է քսվում, վոր հին մազերից ազատվի։

Գիլագռավը թռավ։ Կոտին մազ կար։ Տարավ բունը։ Ձվերը տաք տեղ կունենան։ Եդ ձվերից հետո փոքրիկ ճուտեր դուրս կգան։

---

81. Անճոռնի ճուտիկը

Ցերեք շաբաթ թուխսը վեր չեր կենում ձվերի վրայից։ Տասներկու բրդոտ ճուտեր դուրս եյին յեկել, մնում եր միայն մի կանաչագույն փոքրիկ ձու։

Վերջապես մի առավոտ թուխսը նկատեց, վոր ձվի ներսից մեկը թրխկթրխկացնում է։ Սաստիկ ուրախացավ, իսկույն չարդեց ձուն իր ամուր կտուցով, ու միջից դուրս յեկավ ճուտիկը։

Սա նման չեր մյուս ճուտիկներին։ Ավելի բրդոտ եր, ավելի դեղին, վոտիկները կարճ-կարճ, գլուխը լայն, կտուցը տափակ։

— Ես ինչ անճոռնի յե,— մտածեց մայրը, մի քիչ տխրեց, բայց շուտով ինքն իրեն սիրտ տվեց թե՝ վոչինչ, կմեծանա, կգեղեցկանա։

Հավաքեց իր բոլոր ճուտիկներին ու հպարտ-հպարտ կռըխկալով տարավ նրանց առվի ափը քուջուջ անելու։ Անճոռնի ճուտիկը ջուր տեսավ թե չե, ընկավ մեջը։

Մայրը սարսափած ճչում եր, կանչում, թևերը թափ տալիս, նետվում դեպի ջուրը։ Ճուտիկներն ել ծվում եյին, դես ու դեն ընկնում։

Իսկ անճոռնի ճուտիկը թեթև շարժում եր իր թաթերը ու հանդիստ լող տալիս ջրի յերեսին։

Պառավ նանը լսեց թուխսի ճիչն ու բակի աղմուկը։ դուրս վազեց, տեսնի՝ ինչ ե պատահել։

— Վա՛յ, քոռանամ յես,— խփեց նա ծնկանը,— ես ինչ եմ արել. հավի տակ բադի ձու յեմ դրել։

— Քանի՞ որ ե հավը թուխս նստում։
— Իսկ բադը, սագը։

82. Լորիկ

Առավոտուն փչեց հով,
արտը ծփաց, դարձավ ծով.
արտի միջից թռավ լոր,
թռավ, ընկավ ձորե-ձոր։
Լորիկ, լորիկ, ես տարի
արտս արել եմ գարի.
ուր վոր երթաս՝ շուտ արի,
արտիս միջին ծվարի

---

83. Թռչուններ

1. ԸՆՏԱՆԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Հավը, բադը, սագը,— ել ինչ ընտանի թռչուններ գիտեք։

2. ՎԱՅՐԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Բուն, ուրուրը,— ուրիշ։

3. ՑԵՐԳՈՂ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԵՆ՝

Սոխակը, կկուն, կռունկը,— ուրիշ։

---

1. Ինչ լողացող թռչուններ գիտեք։
2. Ինչ ձև ունեն նրանց թաթիկները։
3. Ինչ թռչուններ են ապրում ճահիճներում. ինչ ձև ունեն նրանց վոտքերը, վիզը, կտուցը։
4. Թռչունները տարվա վոր ժամանակին են բներ շինում։
5. Թռչուններն ինչից են բներ շինում։
6. Ինչպես պետք ե ճանաչել ձուն՝ առանց ջարդելու։
7. Սովորեցեք կավից թռչուններ շինել։

---

84. Դժվար հանելուկ

Պուղին թաշկինակով տաս ձու յեր տանում տուն։ Ճամբին պատահեց իր ծանոթին ու ասաց։

— Թե իմանաս՝ թաշկինակումս ինչ կա, սրա ձվածեղից քեզ ել կուտացնեմ։

— Չու,— պատասխանեց ծանոթը։

— Վա՛յ,— զարմացավ խելոքը.— եդ վոնց իմացար։ Դե են ել ասա, քանի՞ հատ ե։ Թե եդ ել իմացար, բոլոր տասն ել քեզ կտամ։

— Տասը։

— Առ, ախպեր, եդ ել իմացար,— ասավ Պուղին ու թաշկինակով ձուն տվեց ծանոթին։

85. Աշոտի ձեռնափայտը

1.

Աշոտն ու Տիգրանը մի անգամ այգի գնացին, ուռենու ճյուղերից իրենց համար փայտեր կտրեցին։

Ցերը առվի ափին նստած խոսում էին, Տիգրանն իր փայտը դեն գցեց, իսկ Աշոտը տնկեց առվի ափին փխրուն ու խոնավ գետնի մեջ։

Անցավ միքանի ամիս։ Ամառվա վերջն էր։ Տիգրանը մի անգամ մենակ նույն տեղը յեկավ և ինչ տեսնի՝ Աշոտի տնկած փայտը ճյուղեր է տվել. ուրախացավ և այդ որից սկսեց խնամել նրան։

«Թող աճի, Աշոտից հիշատակ կմնա»,—մտածեց նա։

2.

Շատ տարիներ անցան։

Աշոտն ու Տիգրանը կրկին միասին յեկան այդ կողմերն զբոսանքի։ Աշոտը նկատեց առվի ափին մի

գեղեցիկ կանաչ ուռենի, վոր ճյուղերը կախել էր ջրի վրա։

— Ցեկ նստենք այս ուռենու տակ,—ասաց նա Տիգրանին։

—Ցես հաճախ նստում եմ ու քեզ հիշում.—պատասխանեց Տիգրանը։

— Իսկ ինչու ինձ ես հիշում—հարցրեց Աշոտը։

— Հիշում ես, վոր ուռենուց կտրածդ փայտը տնկեցիր այստեղ։ Ահա այն փայտն է, վոր աճել, ուռենի յե դարձել. մենք այժմ նրա տակն ենք նստած։

— Ուռենու ճյուղեր բերեք, տնկեցեք ձեր առվի ափին։



86. Ծառատունկը

Մեր դպրոցը պատրաստվում է շուքով տոնելու ծառատունկի տոնը։

Մեծ աշակերտները գրել էին «ԱՄԵՆ ՄԻ ԱՇԱԿԵՐՏ ՄԻ ԾԱՌ ՏՆԿԻ» և կպցրել էին դպրոցի դռանը։

— Բա դուք ինչ եք անելու,—հարցրեց ուսուցիչը։

— Ինչ վոր ասեք՝ կանենք. փոս էլ կփորենք, ծառ էլ կտնկենք, ջուր էլ կկրենք,—պատասխանեցինք մենք։

— Լավ,—ասաց ուսուցիչը,—մենք աշխատանքն այնպես կբաժանենք, վոր ձեզ հեշտ աշխատանք ընկնի. դուք դեռ փոքր եք։

Մենք վորոշել եյինք՝ ճանապարհի յերկու կողմը ծառեր տնկենք։

Մեծ աշակերտները փոսեր փորեցին։

Փոսերն եղպես միքանի որ մնացին։

Կիրակի որ եր։ Շատ մարդ եր հավաքվել։ Մենք

եյինք, կոմյերիտականները, կուսակցականները, կանայք, բոլորս էլ կարմիր դրոշակներով։

Տնկիները բերել եյին, պատրաստել. սկսեցին տնկել։ Զուռնեն ածում եր։

Մենք ուրախ-ուրախ աշխատում եյինք։ Իսկական տոն եր. 300 ծառ տնկեցինք։

— Պատրաստվեցեք ծառատունկի տոնին։
— Տնկիներ ձեռք բերեք։
— Ձեր դպրոցի բակում ու դպրոցի շուրջը ծառեր տնկեցեք։
— Գյուղացիների հետ մասնակցեցեք ծառատունկի տոնին։
— Պահպանեցեք անտառները։

---

87. Մեղու

Պզզան, պզզան, պզպզան,
պստիկ մեղու. տզտզան.
դաշտ ու հովիտ կ՝ըշնես,
բարձր սարեր կթռչես
ու վոտներով թավամազ
փոշի առած տուն կգաս։

---

88. Մեղուները

Գարունը յեկավ. արևը հալեց, փախցրեց դաշտերի ձյունը։ Որը տաք եր. արևը վառ։

Մեղուները փեթակից դուրս յեկան, թռան խնձորենու մոտ։

— Մի՞թե խնձորենին խեղճ մեղուների համար վոչինչ չունի. չե՞ վոր նրանք ամբողջ ձմեռը սոված են յեղել։

— Վոչ, մեղուները շատ շուտ են դուրս թռել. դեռ խնձորենու ծաղիկները թագնված են բողբոջների մեջ։

Մեղուները թռան դեպի բալենին։

— Մի՞թե բալենին ծաղիկներ չունի խեղճ մեղուների համար։

— Միքանի որ հետո գան՝ գուցե լինի. այդպես շուտ վոչ մի ծաղիկ բացված չի՞ լինի։

Մեղուները թռան կակաչի մոտ, մտան նրա գունավոր բաժակը, բայց այնտեղ վոչ մեղր կար, վոչ հոտ։

Խեղճ մեղուները սոված, տխուր, ուզում եյին յետ թռչեն փեթակը, յերբ հանկարծ թփի տակ տեսան մուգ-կապույտ փոքրիկ ծաղիկը—մանուշակը։

Մանուշակը բաց եր, մեղը լիքը քաղցր, բուրա-լից հյութ։

Մեղուները կերան, խմեցին, յեռա թռան կուշտ, ուրախ։

---

89. Մեղու

Գարուն, ամառ ամեն որ
նա գնում է դաշտ ու ձոր,
աշխատում է միշտ անվերջ,
մեղը է փնտռում ծաղկանց մեջ։
Իսկ յերբ փչե ցուրտ քամին,
ծաղիկներն ել թառամին,
նա իր ժողված պաշարով
կապրի ձմեռն ապահով։

— Ել վոր միջատներն են ձմեռվա պաշար հավաքում։

---

90. Մրջյունները

Մրջյունները ճանապարհի վրայով անվերջ գնում ու գալիս եյին. ամեն մեկն իր գործին եր։

Զարահճի Հայկը վերցրեց կավի մի փոքրիկ գնդիկ ու դրեց մրջյուններից մեկի վրա։ Խեղճ մրջյունը չեր կարողանում տակից դուրս գալ։ Իսկ Հայկը նայում եր, թե ինչ կլինի։

Գնում են ու գալիս մրջյունները, բայց խեղճին չեն նկատում. ամեն մեկն իր գործին եր։

Բայց ահա մի մրջյուն կանգ առավ, տեսավ, վոր ընկերը վտանգի մեջ է, ուզեց ոգնել նրան՝ կավի տակից դուրս գալու։ Շատ չարչարվեց, չկարողացավ։ Արագ-արագ վազեց ինչ-վոր տեղ։

Քիչ անց շատ մրջյուններ թափվեցին ոգնության. հավաքվեցին գնդիկի շուրջը։ Մեծ է կավե սարը, բայց չե՞ վոր մրջյունները շատ են։ Նրանք մի ասին աշխատանքի կպան։

Մի-մի կորեկի չափով կոշտը քանդում եյին ու տանում, դեն գցում։ Շուտով ամբողջ կավը կրեցին և մրջյունն ազատվեց։

— Դիտեցեք մրջյուններին։

---

91. Անկյունում

Մուկուչը կանգնած եր տան անկյունում. տեսնում է վոստայն, սարդն ել վրան. ենքան ել թաթեր ունի, յերկար, շատ յերկար։ Սարդը մոտեցավ վոստայնի ծայրին ու հանկարծ ընկավ։

— Կվնասվի,— մտածեց Մուկուչը։ Մեկ ել տեսավ ցածում մի ուրիշ վոստայն՝ բարակ թելով միացած վերևի վոստայնին. հենց այդտեղ ել նստեց սարդը՝



— Տես, յերկու հարկանի տուն ունի.— մտածեց Մուկուչը։ Հանկարծ «թը՛փ»—վերին հարկը միան-

գամից յերկու ճանճ ընկան։ Մեկը փախավ, մյուսը խճճվեց մնաց։

Վերևի վոստայնը ցնցվեց ու շարժեց ցածի վոստայնը այն թելով, վորով սարդն իջել եր։ Սարդը կծկվեց ու հանկարծ սկսեց արագ-արագ բարձրանալ թելով։

Ճանճը թափ տվեց իրեն, պուկ յեկավ ու թռավ։ Մուկուչն ուրախացավ, վոր ճանճը ազատվեց։

— Դիտեցեք սարդը, նկարագրեցեք։

---

92. Ինչպես մենք խուզվեցինք

1

Մեր բոլորի մազերը յերկարել ու խճճվել եյին։ Բժիշկը բացատրեց, թե յերկար մազերը կեղտ ու փոշի յեն հավաքում, գլուխը լավ չի մաքրվում լվանալիս։

Վորոշեցինք բոլորով խուզվել։ Բայց ինչպես, ինչով և ով պիտի խուզեր։

Թե մկրատն առնես ու խուզես, բոլորի գլուխները բոստան-բոստան կանես, լավ չի։

Ուսուցիչն ասաց· «Մեքենա կճարեմ, մեծերից մեկը թող բոլորիդ խուզի»։

Զարմացած մնացինք, թե եդ ինչ մեքենա յե։

2

Ցես կարծում եյի, թե մեքենան կլոր պղնձի պես մի բան կլինի, գլուխներս կկոխեն այնտեղ ու խուզված կհանենք։

Յերբ յերեք որ հետո ուսուցիչը բերեց մեքենան, բոլորս ձայն տվինք. «Հը՛մ, այ թե ինչպիսի մեքենա յե. կարծում եյինք՝ սարսափելի բան կլինի»։

3

— Այսոր դասերից հետո պիտի խուզվենք,— ասաց ուսուցիչը.—ով առաջինը կնստի։

— Ցես, յես, յես...—լսվեցին միքանի ձայներ։

Ամենից առաջ նստեց Անտոնը. ականջները մազերի տակ չեյին յերևում։

Ուսուցիչը լրագիրն անցկացրեց Անտոնի վիզը, մեկն ել փռեց վոտքերի տակ ու սկսեց խուզել։

Հետաքրքրությամբ նայում եյին։

Մեծ աշակերտները մեջ ընկան, սկսեցին փոքրերին խուզել։

Մյուս որը բոլորիս գլուխները մաքուր եյին։

— Ձեր խմբում բոլորը խուզված են։

— Ամիսը մի անգամ խուզվեցեք։

— Ձեր կոոպերատիվի փողերով դպրոցի համար խուզելու մեքենա գնեցեք։

93. Մայիսը

Զուգված, զարդարված
Թավիշ կանաչով՝
ցոլում են դաշտեր
վոսկի ճաճանչով։

Մայիսը սիրուն
գոհար է մաղել,
Թերթերը ծաղկանց
ցողով շաղախել։
Հազար հազարով։
Թռչուն է յերգում—
դաշտերը կանաչ
զնգում-զրնգում։

94. Մայիսի սեկի մասին

Մենք դասարանում ծաղիկներից ու կանաչ ճյուղերից շղթա եյինք հյուսում։ Մյուս որը մայիսի սեկն եր։

Պետք է դաղարեցնեյինք դպրոցը, և ինքներս ել կարմիր դրոշակներով մասնակցեյինք շքերթին։

— Ցես մայիսի տոնը շատ եմ սիրում,— ասաց Հրաժինը,— տաք է, շատ ծաղիկներ կան, դրոշակներ, յերգ, նվագ։

— Ընկեր Սոֆիկ,— ասաց Լուսիկն ուսուցչուհուն,— յերբ դուք սովորում եյիք, ինչպես եյիք տոնում մայիսի սեկը։

— Մենք այդ որը դաս եյինք սերտում. սեզ թվանշաններ եյին դնում, պատժում, անկյունը կանգնեցնում։

Տոնի մասին—վոչ մի խոսք։

Իմ հայրը բանվոր եր։ Մի անգամ նա ինձ իր հետ տոնելու տարավ։ Բանվորներն անտառում հավաքվել եյին իբր թե քեֆի, բայց ժողով արին։

Ժողովից հետո շարքերով անցան քաղաք. նրանց դրոշակների վրա գրված եր՝

«Ութ ժամվա բանվորական որ ենք պահանջում»։

Քաղաքում վոստիկանները նրանց ցրեցին։

Միքանիսին բանտարկեցին։

— Առաջ այդպես եր։ Իսկ հիմա։

— Դուք ինչպես եք տոնելու մայիսի սեկը։

— Կազմեցեք տոնի ծրագիրը։

---

95. Մանկական Ինտերնացիոնալ

Ցերգով շարժվենք մենք մանուկներս—
գնանք մեր տունը մանկական.
Թռչնի յերգի պես տարածվեն թող
յերգերը մեր—թող թրռվրռան։

Ահա շողում է արեգակը,
այգում փրռվել են կանաչներ.
Թռչունն իր յերգն սկսել է.
ցողով ծածկվել են տերևներ։

Մեր թույլ վոտքերը միշտ քայլում են,
մանուկ սրտեր ենք մենք կրում.
դեպի ուսումն ու գիտությունը
գնում կամքով մեր ընդհանուր։

96. Մեր կոմունան

1

Ցեռ տասներկու տարեկան եյի։ Մորս հետ ապրում եյի Աշտարակում։ Մայրս մանկատանը լվացարարուհի յեր։ Նա հիվանդացավ. ինն որ պառկեց ու մեռավ։

Ցեռ շատ լաց յեղա։

Հետո մորս թաղեցին, իսկ ինձ ընդունեցին մանկատուն։

Շատ լավ եր մանկատանը. այնտեղ սովորում եյի, բայց ելի հաճախ հիշում եյի մորս. ուզում եյի լաց լինել, բայց չեյի լալիս, վորովհետև պիոներ եյի։

Աշտարակից վոչ հեռու մի գյուղ կա—Թաքիա յե կոչվում։ Մեծ վորբերն այնտեղ կոմունա ունեյին։ Իրենք եյին վարում, ցանում, բանջարանոց պատրաստում։

Աշտարակում յես ապրեցի չորս տարի։

2

Բայց ահա մի անգամ մեզ՝ մեծահասակներիս կառավարիչը կանչեց ու ասաց.

— Ցերեխեք, ուզում եք կոմունա գնալ. այնտեղ այս բոպեյիս աշխատողների կարիք կա. շատ հոգեր են ստացել, մշակելը չեն հասցնում։

Մեզնից միայն յերեքը չուզեցին. արհեստավոր եյին ուզում դառնալ։

Մյուսներս ուրախությամբ համաձայնեցինք և սկսեցինք ճանապարհվելու պատրաստություն տեսնել։

3

Կիրակի յեր։ Հավաքվեցինք, բոլորին մնաս-բարև

ասացինք։ Կառավարիչը ճառ խոսեց. ասաց, վոր մենք կյանք ենք մտնում, ու հաջողություն ցանկացավ մեզ։ Մենք լաց յեղանք, հետո նորից ուրախացանք ու ճանապարհ ընկանք։

4

Ճաշի մոտ մենք արդեն կոմունայում եյինք։ Աշխատանքը յեռում եր, մեկը մարգեր եր պատրաստում, մեկը հատիկներ մաքրում։

Ուրախ դիմավորեցին մեզ, տեղավորեցին. մեր համբերությունը հատնում եր. իսկույն աշխատանքի կպանք։

Սկզբում մեզ համար ծանր եր, բայց հետո վարժվեցինք և մեզ շատ լավ եյինք զգում։

Մեր կոմունան որեցոր ընդարձակվում է. նոր տներ ենք շինում, նոր մարագներ։ Այս տարի մեզ համար դպրոց շինեցինք. բոլորը գյուղատնտեսություն են սովորում։

Ցերբեմն գալիս եյինք Աշտարակ մեր փոքրահասակ ընկերների մոտ ու միասին ուրախ ժամանակ անցկացնում։

---

97. Սարի լանջը

Սարի լանջը մահճակալ,
ուխա՛յ, ուխա՛յ, ինչ փափուկ է,
չեչոտ քարը գլխակալ,
ուխա՛յ, ուխա՛յ, ինչ կակուղ է,
մի հին կարպետ ուսերին,
ուխա՛յ, ուխա՛յ, ինչ նախշուն է,
այս է հովվի անկողին,
ուխա՛յ, ուխա՛յ, ինչ սիրուն է։

---

98. Վոչխարները

1

Գարնանը, յերբ ձյունը հալվեց, կանաչ խոտը բուսավ, մեր վոչխարներն արածելու դուրս յեկան։

Գարնան սկզբին վոչխարները ծնեցին. ամեն մեկը մի գառ բերեց. միայն մեկը յերկու գառ ուներ։ Վոչխարներին Սաքոն եր հանդը տանում, գառներին՝ յես։

Հանդում գառներն արածում եյին, յես ել շվի եյի փչում, ժանուշակ քաղում, փնջեր անում, բերում, մորս տալիս։

Կեսորին հոտերը բերում, խառնում եյինք իրար, մեր տալիս. կանայք կթում եյին, կաթը լցնում մեծ կաթսաները։

Ցերը շոգն ընկավ, հայրս ու Սաքոն մեծ-մեծ յերկար մկրատներով խուզեցին վոչխարների բուրդը։

Ցես ոգնում եյի նրանց, իսկ մայրս ու քույրս ել բուրդը հավաքում եյին, տոպրակները լցնում։

Հետո քույրս այդ բուրդը լվաց, գզեց, իսկ մայրս թել մանեց։

Այդ թելից մեզ համար տաք վերնաշապիկներ, գուլպաներ, ձեռնոցներ գործեցին, քույրս իր համար շալ գործեց։

Մնացած թելերը մայրս գույնզգույն ներկեց, վոր ձմեռը կարպետ, խալիչա գործեն։

— Բրդից դատ վոչխարն ել ինչ ե տալիս։

---

99. Առաջին խումբը պատրաստվում ե դպրոցական ցուցահանդեսի

Մոտ ե դպրոցական տարվա վերջը։ Վրա յե հասնում ամառվա արձակուրդը։ Ամբողջ դպրոցը ցուցահանդեսի յե պատրաստվում։ Հանգիստ ու դադար չկա։

Ամեն մի խումբ ուզում ե իր աշխատանքը ցույց տալ։

Մեր առաջին խումբը յետ չի մնում մյուսներից։ Միքանիսը տերևներ ու ճյուղեր են կպցնում աշնան տախտակի վրա, ուզում են բնության որացույցները, կավե ծեփվածքները։

Մյուսները հավաքում ու դասավորում են նկարները, վոմանք ել դարակներ են պատրաստում։

Ցուցահանդեսի յեռյակը մեզ պատվիրել ե 30 դրոշակ և թղթե շղթաներ պատրաստել։

Բայց ամենից դժվարն ե՝ մեր բաժնի վերևը մեծ ու գեղեցիկ տառերով գրել.

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԿ

— Դուք ել ցուցահանդես կազմակերպեցեք։

— Հրավիրեցեք գյուղացիներին։

---

100. Առաջին խումբը դպրոցական ցուցահանդեսում

Վերջապես ցուցահանդեսը պատրաստ ե։

Կենդանի անկյունը նախասենյակում թողինք։ Դասարանից դուրս բերինք սեղանները, պատերը սրբեցինք, հատակը մաքուր լվացինք։ Պատերի մոտ սեղաններ դրինք։

Դժվար ե մեր դասարանները ճանաչել. մի անկյունից մյուսը ձգված են գունավոր շղթաներ. պատերի վրա կարմիր դրոշակներ են ամրացրած։

Մեր խմբին շատ լավ տեղ են տվել ձախ անկյունում. մենք վերևը մեծ տառերով գրեցինք—

Ի ԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

Պատի վրա ամրացրած են մեր լավ նկարները, տախտակները, պլակատները։

Սրանց տակը, սեղանների ու դարակների վրա դարսած են մեր տետրերը, կավե ծեփվածքները և ուրիշ աշխատանքներ։

Ուզում եյինք Լենինի պատկերն ել կախել, բայց

մեզ ասացին, վոր ավելի հարմար ե տեղավորել Լենինյան անկյունում. մենք համաձայնեցինք։

— Դուք ել տարեկան ցուցահանդես կազմակերպեցեք։
— Գրեցեք այդ ցուցահանդեսի մասին։

---

101. Լենինյան անկյունը ցուցահանդեսում

Մեր ցուցահանդեսի ամենագեղեցիկ մասը Լենինյան անկյունն ե։ Լենինյան անկյունը կազմակերպող յեռյակը ցուցահանդեսից առաջ բոլոր դասարաններում հայտարարություն եր կախել.

«ՀԱՎԱՔԵՑԵՔ ՈՒ ԴՊՐՈՑ ԲԵՐԵՔ ԱՄԵՆ ԻՆՉ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ»։

Բերում եյին պատկերներ, նկարներ՝ լրագրերից ու գրքերից հանած, վոտանավորներ, իրենց գրածները Լենինի մասին։ Միքանիսը Լենինի մասին գրքեր եյին բերել։

Մեկն ել Լենինի արձանն եր բերել։

Անկյունում Լենինի պատկերներն եյին. Լենինը յերեխա ժամանակ, Լենինը ճառ ասելիս, Լենինը դպրոցում, թաղումը և ուրիշ նկարներ։

Մեծ աշակերտները մի պլակատ եյին կախել, վրեն գրված եր.

ԼԵՆԻՆԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՎ ԲԱՐԵԿԱՄՆ Ե.
ՄԵՆՔ ՉԵՆՔ ՄՈՌԱՆԱ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ.
ԼԵՆԻՆԸ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ Ե։

Ամբողջ անկյունը կանաչ ճյուղերով եր զարդարված, իսկ մեջտեղը կախված եր Լենինի պատկերը կարմիր ու սև կտորից շինված շրջանակի մեջ։

---

102. Յերբ ե լինում

Արևն ե այրում,
խոտը չորանում,
ցորենը հասնում,
հասկերը լցնում։
Այս յերբ ե լինում։

---

103. Բագրատը գյուղում

1

Իմ հայրը բանվոր եր. մենք ապրում եյինք Յերևանում. ամառները գալիս եյինք մեր գյուղը։

Մի անգամ հորեղբայրս ասաց.

— Բագրատ ջան, արի՛ քեզ տանեմ սարը, Վառոնանի մոտ։

Գնացինք. նանս շատ ուրախացավ։

Հորեղբայրս մի գառ մորթեց, մաշկեց։

— Դու ետեղ կաց, Բագո՛,—ասաց հորեղբայրս,—մտիկ արա, վոր շները միսը չտանեն, յես կրակը թեժացնեմ, խորոված անեմ։

Միսը դրած եր բարձր սալ քարի վրա, իսկ ներքևն ընկած եր փորոտիքը։

Փայտը ձեռս առա, կանգնեցի, աղիքներն եյի քաշքշում։ Մեկ ել 4–5 շուն վրա տվին այդ փորոտիքին։

Շատ վախեցա։ Սկզբում ձայնս չեր դուրս գալիս. հետո բղավեցի։ Հորեղբայրս հասավ ու չոմբախով շներին յետ տվեց։ Շները փախան։

—Վա՛յ, քոռանամ,—գոչեց նանս վրանից դուրս

գալով,—յերեխես վախեցավ. սպրդնել է։ Ա՛ռ, ա՛ռ, քեզ մատաղ, միքիչ ջո՛ւր խմի։

— Չե, ենքան էլ չվախեցա...—կմկմացի յես։

— Սարի շները են, կոպիտ են, բայ՛ ջան,—ասաց նանը.—ձեր Յերևանի շների պես քաղաքավարի չեն։ Դրանից հետո միշտ պետք է փայտը ձեռքիդ պահես։

Դրանից հետո շների հետ շատ զգուշ եյի։

2

Մյուս որը Վառո նանը խնոցի հարեց. ինձ նըստացրեց խնոցու վրա ու յերգեց.

«Հարի՛, հա՛ հարի, խնոցի՛»,

մեջդ է բարի, խնոցի՛»։

Խնոցու վրա շատ լավ եյի ճոճվում։ Բավականին հարելուց հետո նանն ինձ իջեցրեց. բաց արեց խնոցին, նայեց։

— Բազո՛ ջան, ինչ կարագ է, ձեր Յերևանումը հո եսպես կարագ չես ուտում. դե՛, հացդ բեր՝ յեղպապատառ տամ։

Հաց ու կարագ կերա, թան էլ խմեցի. շներն եղտեղ եյին. խնոցին շրջապատած՝ պոչերն անհանգիստ շարժում եյին։ Վառո նանը գուռը թան ածեց.

— Դե լակե՛ք։

Շներն սկսեցին ագահ լակել թանը։

Մեր հարևան սարվորներից միքանիսը կաթը սեպարատով եյին զտում, սերը մի ամանի մեջ եր հավաքվում, կաթը մյուս։

Սերը խնոցով հարում եյին. կարագը համ շատ եր ստացվում, համ էլ կաթը փոխելու համար ամանների կարիք չկար. տատս ասում եր, վոր մյուս տարի իրանք էլ պիտի սեպարատոր գնեն։

3

Սարում հովիվների հետ յես գնում եյի հանդը։ Վրաններից շատ հեռանում եյինք։ Հովիվը սրինգ եր ածում, վոչխարները հանգիստ արածում եյին. հետո նա սրնգի յեղանակը փոխում եր, ու վոչխարները գնում եյին դեպի աղբյուրը՝ ջուր խմելու։

Կեսորին բերում եյինք վրանների մոտ, վոր վոչխարը կթվի։

Այդտեղ յես մնացի յերկու շաբաթ. հետո վերադարձանք Յերևան։

Շատ շոգ եր. յես միշտ հիշում եյի սարի հովն ու սառը ջուրը։

---

104. Արեվ որերը մի կորցնեք

Արևը շատ առողջարար է մարդու համար։

Բացի ջերմությունից, արևի շողերը մարդուն ամրացնում են։ Շատ հիվանդություններ արևով են բժշկում։

Հիվանդներն արևի վաննաներ են ընդունում։

Ամառը ամրացրեք ձեր մարմինն արևով։

Աշխատեք միշտ արևի տակ լինել։

---

105. Ինչ պետք է անել ամառն եքսկուրսիայի ժամանակ

1. Հունիսի սկզբներին դիտեցեք գարու և ցորենի հասկերը։ Վոնն ավելի շուտ կհասունանա։

2. Ցերը սկսեցիք ցորենից հեղի պատրաստել։

3. Ի՞նչ թռչունների ձայն եք լսում դաշտում։

4. Տեսե՛ք՝ ինչ աշխատանքներ են լինում դաշտում և նշանակեցե՛ք այդ աշխատանքների ժամանակը։

5. Փորձեցե՛ք ճանաչել ձեզ պատահած բույսերը։

6. Հավաքեցե՛ք այդ բույսերը և չորացրե՛ք։

---

106. Վորտեղ լեվ ինչպես պիտի լողանալ

Զլողանա՛ք կանգնած, նեխած ու պղտոր ջրում. ընտրեցե՛ք մաքուր ու պարզ ջուր։

Զլողանաք առավոտը՝ արևը ծագելուց առաջ և յերեկոյան՝ յերբ օդը խոնավ է լինում։

Յերկար լողանալը վնասակար է. 10—15 րոպե ջրում մնալը բավական է։

ՅԱՆԿ

	Եջ
1. Տոն	3
2. Գրագետ	4
3. Վորոշումներ	5
4. Ինչ՞ կխնդրեր գիրքը	5
5. Բժշկի զրույցներից	6
6. Ինչ՞ է անում մեր սանիտարը	7
7. Մրսելու դեմ.	8
8. Մեր ճաշը	9
9. Առաջին ձյունը	10
10. Ձմեռ	10
11. Ցերը ե լինում	10
12. Մեր որատեսրից	11
13. Ձյունը	11
14. Վերմակը	11
15. Ցեղենին	12
16. Ուրախ ձմեռը	12
17. Որատեսրից	13
18. Ձմռան եքսկուրսիան	14
19. Իմ սղղանը	15
20. Ցրատաբ ականջները	17
21. Դասից ուշացող աշակերտը	18
22. Քուրքը	19
23. Ընտանիքը	20
24. Հնարք	21
25. Հոր ոգնականը	21
26. Հագուստը	21
27. Ճախարակ	22
28. Մեր նոր ընկերները	23
29. Իմ տատը	24
30. Կենդանի անկյուն	26
31. Թռչունների սեղանը	26
32. Ընտանի կենդանիներ և վայրի գազաններ	27
33. Ով ինչ ե ուտում	28
34. Գյուղից քաղաք	29
35. Գյուղի առուտուրը	30
36. Խելոք հաշիվ.	31
37. Կոոպերատիվը	32
38. Շարժվող տունը	33
39. Ելեկտրականություն	34
40. Գայլերի վտանգը	35
41. Կարմիր բանակի տարեդարձը	36
42. Ամեն մեկն աշխատում ե բոլորի համար	38
43. Մարդը մենակ ապրել չի կարող	40
44. Ի՞նչ ե	41
45. Ինչ՞ կարող ե անել կոլեկտիվը	42
46. Բաջ տղան	43
47. Ո՞վ ե Լենինը	44
48. Պեսյալի զրոսանքը	45
49. Հունվարի 9-ը	47
50. Հունվարի 21-ը	48
51. Մեր պատկը Լենինին	49
52. Լենինի թաղումը	50
53. Ցերը ե լինում	51
54. Անցան [illegible] ե դիտել գարնանը	51
55. [illegible]	52
56. Վերջին փաթիլները	54
57. Ջնծաղիկ	55
58. Գարուն	55
59. Գարուն	56
60. Առավոտ	57
61. Հատիկի զարթնելը	58
62. Մարտի ութը	58
63. Անասատածների կոլեկտիվ	59
64. Գարուն	61
65. Մանուշակ	62
66. Զրվեժ	63
67. Զուրը	63
68. Առվակներ	64
69. Հատիկ	64
70. Ցանքսը	64
71. Շարքացանով	65
72. Սերմի զտելը	66
73. Արոր	67
74. Մեր դասարանի փորձից	67
75. Մեր պարտեզը	68
76. Մեր բանջարանոցը	69
77. Պարտեզի և բանջարանոցի վնասատուները	70
78. Պահապաններ	71
79. Պատիկ ծիտը	72
80. Կոշ ու գիլագոավը	72
81. Անճոռնի ճուտիկը	73
82. Լորիկ	74
83. Թռչուններ	74
84. Դժվար հանելուկ	75
85. Աշոտի ձեռնափայտը	76
86. Ծառատունկը	77
87. Մեղու	79
88. Մեղուները	79
89. Մեղու	80
90. Մրջյունները	80
91. Անկյունում	81
92. Ինչպես մենք խուզվեցինք	82
93. Մալիսը	84
94. Մալիսի մեկի մասին	85
95. Մանկական Ինտերնացիոնալ	86
96. Մեր կոմունան	86
97. Սարի լանջը	89
98. Վոչխարներ	89
99. Առաջին խումբը պատրաստվում ե դպրոցական ցուցահանդեսին	90
100. Առաջին խումբը դպրոցական ցուցա[illegible]	91
101. Լենինի[illegible] հան[illegible]	[illegible]
102. Ցերը [illegible]	[illegible]
103. Բարգ[illegible]	[illegible]
104. Արև [illegible]	[illegible]
105. Ինչ պետք [illegible] եքսկուրսիայի ժամանակ	[illegible]
106. Վորտեղ և ինչպես պիտի լողանալ	96

ՀՅ Ազգային գրադարան
NL0977019

1928 г.
11
26551

ЛУСАРЦАК I-ый ГОД.
Сост. С. Манукян

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.